

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2011

**«Ֆինանսական կայունության հաշվետվությունում» ներկայացված են
Հայաստանի ֆինանսական համակարգի կայունությանը սպառնացող
հավանական ռիսկերի գնահատումը
և ֆինանսական համակարգի՝ այդ ռիսկերը չեզոքացնելու կարողությունը:
Հաշվետվությունում ներառված ՀՀ մակրոտնտեսական միջավայրի և
ֆինանսական համակարգի վերլուծությունների վերաբերյալ առավել
մանրամասն տեղեկատվությունը հրապարակվում է «ՀՀ ԿԲ տարեկան
հաշվետվություն», «Դրամավարկային քաղաքականության ծրագրի
կատարման հաշվետվություն»,
«ՀՀ ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը,
վերահսկողությունը» պարբերականներում:**

**Հաշվետվությունում օգտագործված են
31.03.2012 թ. դրությամբ առկա ցուցանիշները:**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6
Հեռախոս՝ (374 10) 58 38 41
Ֆաքս՝ (374 10) 52 38 52
Ինտերնետային կայք՝ www.cba.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	7
1. Համաշխարհային տնտեսության զարգացումները	10
1.1. Մակրոտնտեսական միջավայր	10
1.2. Տարածաշրջանի երկրների զարգացումները	14
1.3. Միջազգային ֆինանսական շուկաներ	17
2. Զարգացումները Հայաստանի մակրոտնտեսական միջավայրում	22
2.1. Մակրոտնտեսական զարգացումներ	22
2.2. Արտաքին առևտուր	25
2.3. Զուտ գործոնային եկամուտներ և մասնավոր տրանսֆերտներ	26
2.4. Տնային տնտեսությունների եկամուտներ և պարտքի բեռ	27
2.5. Անշարժ գույքի գներ	28
3. Հայաստանի ֆինանսական շուկայի կայունությունը	31
3.1. Դրամական և կապիտալի շուկաներ	31
3.2. Արժուքային շուկա	34
4. ՀՀ ֆինանսական հաստատությունների կայունությունը	36
4.1. Առևտրային բանկեր	36
4.1.1. Ֆինանսական միջնորդություն, կենտրոնացվածություն	37
4.1.2. Վարկային ռիսկ	38
4.1.3. Իրացվելիության ռիսկ	40
4.1.4. Շուկայական ռիսկ	42
4.1.5. Կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն	44
4.2. Վարկային կազմակերպություններ	45
4.3. Ապահովագրական ընկերություններ	46
4.4. Արժեթղթերի շուկայի մասնակիցներ	49
4.5. Ֆինանսական համակարգի այլ մասնակիցներ	50
5. Ֆինանսական կայունությունը ՀՀ ֆինանսական ենթակառույցներում	51
5.1. ՀՀ միջբանկային վճարումներ	51
5.2. Արժեթղթերի հաշվարկների համակարգեր	55
5.3. Ավանդների երաշխավորում	57
5.4. Վարկային ռեզիստր և ԱԲՌԱ վարկային բյուրո	57
Գծապատկերներ	60
Աղյուսակներ	63
Օգտագործված հապավումներ	63

Ֆինանսական կայունությունը կարելի է բնորոշել որպես ֆինանսական, մակրոտնտեսական պայմանների այնպիսի համադրություն, երբ ֆինանսական համակարգը՝ ֆինանսական հաստատությունները, շուկաները և շուկայի ենթակառուցվածքները միասին ունակ են դիմակայելու հավանական ցնցումներին ու անհավասարակշռություններին՝ այդ կերպ նվազեցնելով ֆինանսական միջնորդության գործառույթների ընդհատման հավանականությունը:

Ֆինանսական կայունությունը սահմանելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ ֆինանսական անկայունություն կարող է առաջանալ ինչպես ֆինանսական համակարգի ներքին գործընթացների խաթարման, այնպես էլ երկրի ներսում ու համաշխարհային տնտեսությունում անբարենպաստ մակրոտնտեսական զարգացումների, խոշոր փոխառուների ու պարտատերերի հետ կապված խնդիրների, տնտեսական քաղաքականության կամ ենթակառուցվածքների փոփոխությունների հետևանքով:

Ֆինանսական կայունության ապահովումը ենթադրում է ռիսկերի հիմնական աղբյուրների, ֆինանսական ռիսկերի ոչ ճիշտ կառավարման, ակտիվների գների ձևավորման անարդյունավետության բացահայտում և համապատասխան քաղաքականության իրականացում:

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական կայունության հաշվետվությունը պատրաստվում է կիսամյակային պարբերականությամբ և ներկայացնում է ֆինանսական համակարգի կայունությանը սպառնացող ռիսկերի, ինչպես նաև ֆինանսական համակարգի՝ այդ ռիսկերին դիմակայելու ունակության ընդհանուր գնահատականը: Ֆինանսական կայունության վերլուծությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման միջոցով Կենտրոնական բանկը նպատակ ունի շահագրգիռ կողմերի ուշադրությունը հրավիրելու այն ռիսկերի, իրադարձությունների վրա, որոնք կարող են վտանգել ՀՀ ֆինանսական կայունությունը, ինչպես նաև նախաձեռնել այդ ռիսկերի կառավարման, նվազեցման վերաբերյալ քննարկումներ:

ՀՀ կենտրոնական բանկի խնդիրներից է ֆինանսական համակարգի կայունության ու բնականոն գործունեության ապահովումը, որը փոխկապակցված է Կենտրոնական բանկի հիմնական գների կայունության ապահովման խնդրի հետ: Ֆինանսական համակարգի անկայուն վիճակը կարող է էականորեն խոչընդոտել դրամավարկային քաղաքականության իրականացմանը և արդյունավետությանը: Սիւնույն ժամանակ, դրամավարկային և մակրոտնտեսական կայունությունը նպաստում է ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկերի նվազեցմանը: Ֆինանսական համակարգին կարևոր դեր է հատկացված ընդհանուր տնտեսական համակարգում, և անհրաժեշտ է, որ ֆինանսական համակարգը պահպանի գործընթացների անընդհատությունը և կայունությունը՝ այդ կերպ նպաստելով ընդհանուր տնտեսության բնականոն աճին:

Ֆինանսական կայունությունը վտանգող փոփոխությունների և տատանումների վաղաժամկետ բացահայտման համար ՀՀ կենտրոնական բանկը իրականացնում է ֆինանսական կայունության շարունակական մոնիթորինգ (մշտադիտարկում), վերլուծություն: Հաշվետվությունում ներկայացված են մակրոմիջավայրում և ֆինանսական համակարգում դրսևորված ռիսկերը, դրանց ազդեցությունը տնտեսության ու ֆինանսական համակարգի տարբեր հատվածների զարգացումների վրա:

ՀՀ ֆինանսական կայունության վրա ազդող ռիսկերը կարող են ծագել ներքին տնտեսությունում, երկրից դուրս՝ արտաքին տնտեսությունում և բուն ֆինանսական համակարգում: Այս առումով ֆինանսական կայունության ապահովման կարևորագույն նախապայմաններն են՝

- կայուն զարգացող ներքին և արտաքին մակրոտնտեսական միջավայրը, որում տնային տնտեսությունները և ձեռնարկությունները բավականաչափ վարկունակ կլինեն,
- կայուն և արդյունավետ ֆինանսական համակարգը, որի ռիսկերը կլինեն խելամիտ ու կառավարելի սահմաններում,
- գործունակ ֆինանսական ենթակառուցվածքները, որոնց անխափան գործունեությունը չի խոչընդոտի ֆինանսական համակարգի գործառույթների իրականացմանը:

Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ ֆինանսական կայունությանը խոչընդոտող հավանական ռիսկերը հաշվետվությունում ներկայացված են 5 հիմնական ուղղություններով՝

- համաշխարհային տնտեսության զարգացումներից ածանցվող ռիսկեր,

- ՀՀ մակրոտնտեսական միջավայրի զարգացումներից ածանցվող ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումներից ածանցվող ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական հաստատություններից ածանցվող ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքներից ածանցվող ռիսկեր:

Հաշվետվությունում ներկայացված են այդ ոլորտներում դրսևորված ռիսկերը և դրանց հնարավոր ազդեցությունը տնտեսության և ֆինանսական համակարգի բոլոր հատվածների զարգացումների վրա: Ընդ որում՝ ՖԿ հաշվետվությունում հիմնականում կարևորվում են բանկային համակարգի ռիսկերն ու զարգացման ուղղությունները: Ֆինանսական համակարգի ակտիվների ավելի քան 90%-ը կազմում են առևտրային բանկերի ակտիվները, հետևաբար բանկային համակարգը պայմանավորում է ընդհանուր ֆինանսական կայունությունը և զարգացման ուղղությունները:

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Տարվա ընթացքում Հայաստանի ֆինանսական կայունությունը պահպանվել է բավարար մակարդակի վրա, թեև նախորդ տարվա համեմատ ֆինանսական համակարգում արձանագրվել է ռիսկերի մակարդակների որոշակի աճ, և հետագա զարգացումների հետ կապված անորոշությունները դարձել են առավել ընդգծված:

Արդյունաբերական նշանակության հունքային ապրանքատեսակների գների աճը, ինչպես նաև տրանսֆերտների ներհոսքի և ներքին պահանջարկի վերականգնումը նպաստել են ՀՆԱ աճին: Միևնույն ժամանակ, ֆինանսական հատվածում բանկային համակարգը շարունակել է վարկավորման աճը:

Համաշխարհային տնտեսության աճի վերականգնումը շարունակվել է, չնայած բարձր են եղել տնտեսական աճի՝ դանդաղման ուղղությամբ ռիսկերը: Չարգացած երկրներում պահպանվել են պետական և մասնավոր պարտքի բեռի բարձր մակարդակները, որոնք սահմանափակում են պետական միջամտության հնարավորությունները, համախառն պահանջարկի աճը, տնտեսության հետագա աշխուժացումը: Այս բարդ իրավիճակում կարևորվում է բոլոր պետությունների կողմից խիստ փոխհամաձայնեցված քաղաքականությունների իրականացումը, ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության բարեփոխումների միասնական մոտեցումների կիրառումը: Արդյունաբերական և պարենային ապրանքների գների շարունակվող աճի պայմաններում գնաճի զսպման խնդիրը տարվա հատկապես առաջին կեսին առաջնային է եղել նաև զարգացած երկրների համար՝ առաջ բերելով հետագա տնտեսական աճի դանդաղման ռիսկեր: ՀՀ հիմնական գործընկեր երկրներում՝ Ռուսաստանում, Եվրոմիության տարածաշրջանում տնտեսական վերականգնումը կանխատեսվածից դանդաղ է եղել, ինչը հնարավոր է բացասական ազդեցություններ ունենա ՀՀ տնտեսության վրա:

Համաշխարհային տնտեսական աճի դանդաղման և միջազգային այլ զարգացումների ներքո ՀՀ-ում արձանագրվել է մասնավոր տրանսֆերտների, գործոնային եկամտի, արտաքին ապրանքաշրջանառության աճ: Տեղի է ունեցել նաև բանկերի կողմից արտաքին աղբյուրներից ներգրավված միջոցների զուտ ներհոսք: Նշված զարգացումները նպաստել են ֆինանսական կայունու-

թյան ամրապնդմանը (մանրամասն տե՛ս «Համաշխարհային տնտեսության զարգացումները» բաժնում):

Ըստ ԱՎԾ տվյալների՝ 2011 թ. ՀՀ տնտեսական աճը կազմել է 4.6%: Աճ գրանցվել է տնտեսության բոլոր ճյուղերում, բացի շինարարությունից, որտեղ դեռևս ցածր են բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալները:

2011 թ., հատկապես առաջին կիսամյակի ընթացքում, բարձր գնաճային միջավայրի պահպանման պայմաններում ԿԲ-ն անցում է կատարել դրամավարկային պայմանների աստիճանական խստացման քաղաքականությանը և երեք անգամ՝ ընդհանուր առմամբ 1.25 տոկոսային կետով¹, բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Տարվա երկրորդ կեսից սկսված արտաքին գնաճային ճնշումների չեզոքացման, գյուղատնտեսության ճյուղի բարձր աճի պայմաններում գյուղմթերքների գների աճի տեմպի նվազման արդյունքում, ի հակադրություն տարեսկզբին ձևավորված բարձր գնաճային միջավայրի, տարեվերջին գնաճի մակարդակը գտնվել է թիրախային միջակայքում: Այս պարագայում հետագայում, մասնավորապես՝ մայիս-օգոստոս ամիսներին, ԿԲ-ն անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը, միայն սեպտեմբերին իջեցրել 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 8% մակարդակ: ԿԲ-ն չեզոք դրամավարկային քաղաքականության իրականացումը շարունակել է նաև չորրորդ եռամսյակում:

Դեկտեմբերի տվյալներով՝ 12-ամսյա գնաճը կազմել է 4.7% (մանրամասն տե՛ս «Ֆինանսական կայունությունը ՀՀ մակրոտնտեսական միջավայրում» բաժնում):

ՀՀ առևտրային բանկերը ամբողջ տարվա ընթացքում պահպանել են նորմատիվային պահանջներից բարձր կապիտալի համարժեքության, իրացվելիության ցուցանիշներ, կառավարելի շուկայական ռիսկեր, 2011 թ. ընթացքում գրանցել են աճի ցուցանիշներ: Բանկային համակարգի շահութաբերությունը տարեկան տվյալներով աճել է, մասնավորապես՝ շահութաբերությունն ըստ ակտիվների կազմել է 1.8%, իսկ ըստ կապիտալի՝ 9.8%:

Ֆինանսական համակարգում առկա ռիսկերը ամբողջ տարվա ընթացքում գտնվել են կառավարելի շրջանակներում՝ ֆինանսական կայունության առումով խոցելիություններ չառաջացնելով: Ընդհանուր առմամբ, ներքին տնտեսության զարգացումները նույնպես բարենպաստ են եղել ֆինանսական կայունության տեսանկյունից (մանրամասն տե՛ս «ՀՀ ֆինանսական հաստատությունների կայունությունը» և «Ֆինանսական կայունությունը ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքում» բաժիններում):

¹ Մանրամասն տե՛ս «Գնաճի հաշվետվություն, 2011 թ. չորրորդ եռամսյակ»:

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

1.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

2011 թվականը կարելի է բնութագրել որպես տնտեսական և ֆինանսական անորոշությունների և խորացող մարտահրավերների տարի: Տարվա ընթացքում համաշխարհային տնտեսությունը մուտք է գործել զարգացման այնպիսի փուլ, որում գերակշռող են եղել նվազման ուղղությամբ ռիսկերը, իսկ առկա հիմնախնդիրներին ոչ միայն չի հաջողվել լուծում տալ, այլև դրանք խորացել և աշխարհագրորեն տարածվել են: Միջազգային կազմակերպությունների կանխատեսումների և վերլուծությունների համաձայն՝ 2011 թ. համաշխարհային տնտեսության աճը դանդաղել է, մինչդեռ առկա կառուցվածքային դժվարությունների պարագայում կանխատեսվում է, որ հետագա տարիներին տնտեսական աճը ցածր կլինի:

2011 թ. համաշխարհային տնտեսական աճի գնահատականի վերանայումները ԱՄՅ կողմից

Ցուցանիշ (տնտեսական աճ)	31.12.10 դրությամբ 2011 թ. կանխատեսում	31.03.11 դրությամբ 2011 թ. կանխատեսում	30.06.11 դրությամբ 2011 թ. կանխատեսում	30.09.11 դրությամբ 2011 թ. կանխատեսում	30.01.12 դրությամբ 2011 թ. գնահատական	30.01.12 դրությամբ 2012 թ. կանխատեսում
Համաշխարհային տնտեսություն	4.4	4.4	4.3	4	3.8	3.3
Զարգացած երկրներ	2.5	2.4	2.2	1.6	1.6	1.2
ԱՄՆ	3	2.8	2.5	1.5	1.8	1.8
Եվրոգոտի	1.7	1.6	2	1.6	1.6	-0.5
Զարգացող երկրներ	6.5	6.5	6.6	6.4	6.2	5.4
ԱՊՀ	5.3	5	5.1	4.6	4.5	3.7
Ռուսաստան	5.1	4.8	4.8	4.3	4.1	3.3
Չինաստան	9.6	9.6	9.6	9.5	9.2	8.2

Տարվա ընթացքում համաշխարհային տնտեսության բնականոն վերականգնմանը խոչընդոտող գործոնները բազմաբնույթ են եղել և փոխկապակցված, որոնցից կարելի է շեշտել հետևյալները.

- Տարերային աղետներ և քաղաքական իրադարձություններ առաջին երկու եռամսյակների ընթացքում:
- Տնտեսական մարտահրավերներ, այդ թվում՝ գործազրկության բարձր մակարդակ զարգացած երկրներում:
- Պարտքային աննախադեպ բեռ և բյուջետային պակասուրդներ գլխավորապես եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում:
- Գնաճային ճնշումներ և՛ զարգացող, և՛ զարգացած երկրներում, որը գլխավորապես դրսևորվել է տարվա առաջին կեսին:
- Ընդհանուր առմամբ անորոշության բարձր մակարդակ և վստահության բացակայություն:

Մի շարք միջազգային կազմակերպություններ, հաշվի առնելով առկա կառուցվածքային հիմնախնդիրները, տարվա ընթացքում նվազեցրել են 2011 թ. համաշխարհային տնտեսական աճի գնահատականը, ինչպես նաև 2012 թ. համար կանխատեսված ցուցանիշները: Սասնավորապես՝ 2011 թ. համաշխարհային տնտեսական աճը ԱՄՅ-ն գնահատել է 3.8%, իսկ 2012 թ. համար կանխատեսված համապատասխան ցուցանիշը 4.0%-ից նվազեցրել է մինչև 3.3%: Միևնույն ժամանակ, Համաշխարհային բանկը կանխատեսել է 2.5% տնտեսական աճ: ՀԲ-ն առավել ցածր տնտեսական աճ կանխատեսել է զարգացած երկրներում՝ 1.4%, իսկ զարգացող երկրների տնտեսական աճը 2012 թ. կկազմի 5.4% (ԱՄՅ կանխատեսումը՝ համապատասխանաբար 1.2% և 5.4%):

2011 թ. ԱՄՆ տնտեսական աճը ԱՄՅ-ն գնահատել է 1.8%, իսկ Եվրոգոտումը՝ 1.6%: Ըստ կանխատեսումների՝ 2012 թ. ԱՄՆ տնտեսական աճը կմնա նույնը, մինչդեռ Եվրոգոտու համար նախանշվում է տնտեսական անկում:


2011 թ. հենց սկզբից տեղի են ունեցել քաղաքական ցնցումներ, որոնք, տնտեսական առկա հիմնախնդիրներից գատ, իրենց հերթին նպաստել են տնտեսական անորոշությունների խորացմանը և տնտեսական ակտիվության վերականգնման դանդաղմանը: Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի քաղաքական իրադարձությունները հանգեցրել են հիմնական ապրանքատեսակների, մասնավորապես՝ նավթի գների կտրուկ աճի: Միևնույն ժամանակ, մարտին ճապոնիայում տեղի ունեցած տարերային աղետների հետևանքով ճապոնիայի տնտեսությունն էական դժվարությունների առաջ է կանգնել՝ իր հերթին վտանգելով որոշ տարածաշրջանների հետագա տնտեսական աճը և, ընդհանուր առմամբ, համաշխարհային տնտեսության վերականգնումը: Հետագայում ճապոնիայի սուվերեն վարկանիշը իջեցվել է մի շարք վարկանշային կազմակերպությունների կողմից:

Տարվա ընթացքում տնտեսական աճի շարունակական դանդաղումը հանդիսացել է ինչպես հիմնական պատճառ, այնպես էլ հետևանք մի շարք զարգացած երկրների պարտքային հիմնախնդիրների և մեկ այլ խումբ երկրներում բյուջետային դժվարությունների համար: Պարտքային խնդիրների հետ կապված խառնաշփոթի կենտրոնում շարունակել է մնալ Եվրոգոտին: Պարտքային խնդիրներից առաջացած ռիսկերի շղթան ֆինանսական համակարգի, մասնավորապես բանկային հատվածների ազդեցության ուղիներով իր շրջանակի մեջ է վերցրել ավելի շատ թվով երկրներ: Նույնիսկ Եվրոգոտու երկրների կառավարությունների ձեռնարկած բազմաթիվ միջոցառումները՝ ուղղված Հունաստանում, Պորտուգալիայում և մյուս երկրներում իրավիճակը շտկելուն, ըստ էության հաջողության չեն հասել՝ ֆինանսական շուկաներում պարբերաբար առաջ բերելով անհանգստությունների և բացասական սպասումների նորանոր ալիքներ (մանրամասն տես «Միջազգային ֆինանսական շուկաներ» ենթաբաժնում):

Գործազրկությունը համաշխարհային տնտեսությունում պահպանվել է բարձր մակարդակի վրա (մոտ 9.0 տոկոս)՝ պայմանավորված տնտեսական դանդաղ վերականգնմամբ, և իր հերթին ռիսկ հանդիսացել հետագա տարիների պոտենցիալ ՀՆԱ-ի համար: Մտահոգիչ է ինչպես երիտասարդ աշխատուժի գործազրկությունը, այնպես էլ արդեն երկար ժամանակ գործազուրկ աշխատուժի մասնագիտորեն «հնամալու» խնդիրը:


* Այս և հաջորդ գծապատկերներում աստղանիշով նշված ցուցանիշները ԱՄՅ գնահատումներն են (2012 թ. հունվար):

Տնտեսական աճի ցուցանիշներն ըստ տարածաշրջանների



Աղբյուրը՝ ԱՄՅ:

Գործազրկության շարժը զարգացած երկրներում



Աղբյուրը՝ ՄԱԿ:

2011 թ. գործազրկության մակարդակը զարգացած երկրներում կազմել է 8.6%՝ էապես գերազանցելով նախաճգնաժամային 5.8%-ը: Շատ զարգացած երկրներում իրավիճակը աշխատանքի շուկայում շատ ավելի բարդ է, ԱՄՆ-ում այն գործազուրկների թիվը, որոնք առանց աշխատանքի են մեկ տարուց ավելի ժամանակահատվածում, կազմում է 29% (2007 թ.՝ 10%): Նշված միտումն ըստ ամենայնի կունենա երկարաժամկետ բացասական ազդեցություն ինչպես հենց աշխատուժի, այնպես էլ, ընդհանուր առմամբ, ողջ տնտեսության համար:

Ջարգացող երկրներում զբաղվածության մակարդակի վերականգնումը շարունակվել է համեմատաբար արագ տեմպերով՝ որոշ երկրներում անգամ գերազանցելով նախաճգնաժամային մակարդակը (Չինաստան, Բրազիլիա):

Համաշխարհային տնտեսական վերականգնման դանդաղումը պայմանավորել է նաև համաշխարհային առևտրի աճի տեմպերի նվազումը, որն էապես զիջել է 2010 թ. համապատասխան ցուցանիշին:


Ապրանքների առևտրի աճը 2011 թ. կազմել է 6.6% (նախորդ տարի՝ 12.6%): Առկա կանխատեսումների համաձայն՝ համաշխարհային առևտրի աճի տեմպի նվազման միտումը կշարունակվի նաև հաջորդ տարիներին՝ հիմնականում պայմանավորված զարգացած երկրների տնտեսական թույլ աճով: Ջարգացող երկրները առավել դիմացկուն են գտնվել ճգնաժամի հետևանքների նկատմամբ, և նրանց կարևորությունը համաշխարհային առևտրում շարունակել է մեծանալ: Մասնավորապես՝ 2011 թ. վերջիններս նպաստել են արտաքին պահանջարկի վերականգնմանը՝ ներկայացնելով ներմուծման համաշխարհային պահանջարկի կեսը: Այնուամենայնիվ, նախորդ տարվա նկատմամբ ներմուծման և արտահանման աճի տեմպերի դանդաղում արձանագրվել է նաև այս խմբի երկրներում:

2011 թ. համաշխարհային առևտրի հիմնական մասնակից երկրների ընթացիկ հաշիվների ամհաշվելը նախորդ տարվա նկատմամբ փոքր-ինչ խորացել են, սակայն դեռևս նկատելի զիջում են նախաճգնաժամային վատագույն մակարդակին:

Տարվա ընթացքում հիմնական բորսայական ապրանքատեսակների շուկաներում զարգացումները և միտումները տարաբնույթ են եղել: Մի շարք ապրանքատեսակների՝ դեռևս նախորդ տարվա կեսերին նկատված աճի միտումը շարունակվել է նաև 2011 թվականին: Տարվա առաջին կեսին հասնելով առավելագույն արժեքների՝ երկրորդ կիսամյակում ապրանքների գները առավելապես փոխել են զարգացման միտումը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ նավթի, արդյունաբերական մետաղների և պարենամթերքի որոշ տեսակների միջին գները 2011 թվականին մոտ են եղել նախաճգնաժամային իրենց առավելագույն արժեքներին:


«Բրենթ» տեսակի նավթի միջին գինը 2011 թ. կազմել է 111 ԱՄՆ դոլար՝ մեկ բարելի դիմաց՝ նախորդ տարվա համեմատ աճելով գրեթե 40.0%-ով: Նավթի միջին գների բարձր աճը հիմնականում պայմանավորվել է տարեսկզբի թռիչքային աճով՝ ինչի պատճառ է հանդիսացել արաբական երկրների ներքաղաքական իրադարձությունների հետևանքով առաջարկի կրճատումը: Թեև հետագայում գների նկատելի աճ չի արձանագրվել, սակայն դրանց բարձր մակարդակը պահպանվել է: Նավթի գների բարձր մակարդակը դրական է անդրադարձել նավթ արտահանող երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի եկամուտների աճի վրա:

Համաշխարհային առևտրի տարեկան տոկոսային աճը



Աղբյուրը՝ ԱՄՀ:

ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Չինաստանի և Եվրոգոտու երկրների ընթացիկ հաշիվները



Աղբյուրը՝ ԱՄՀ:

Արդյունաբերական մետաղների միջին գների տարեկան աճը կազմել է 17.0%, ընդ որում՝ առավել նկատելի աճ արձանագրվել է տարվա առաջին կիսամյակում: Տարեվերջին, պայմանավորված նշված ապրանքատեսակների գնի՝ տնտեսական ակտիվության ցիկլերի հետ կոռելացված լինելու հանգամանքով, համաշխարհային տնտեսական թույլ աճից աժանցված՝ արձանագրվել է գների նվազում: 2011 թ. պղնձի միջին գինը կազմել է մոտ 8829.6 ԱՄՆ դոլար՝ մեկ տոննայի դիմաց, մոլիբդենի միջին գինը նախորդ տարվա համեմատ փոքր-ինչ (4.0%-ով) նվազել է, թեև նվազման միտումն առավել ընդգծված դրսևորվել է միայն տարեվերջին:


Պարենային ապրանքատեսակների գների բարձրացում դիտարկվել է հատկապես առաջին կիսամյակում, ու չնայած երկրորդ կիսամյակում գրանցված որոշակի նվազմանը՝ տարեկան կտրվածքով արձանագրվել է բավականին բարձր աճ: Հացահատիկի միջին գները տարվա ընթացքում բարձրացել են 41.0%-ով և կազմել 8.6 ԱՄՆ դոլար/բուշել: Պարենի միջազգային կազմակերպությունը 2011-2012 մարքեթինգային տարվա համար կանխատեսել է հացահատիկի առևտրի 4.4% աճ, ինչը հիմնականում պայմանավորված է ցորեն արտահանող ԱՊՀ երկրների արտահանման հնարավորությունների կտրուկ վերականգնմամբ: Բրնձի գների տարեկան աճը կազմել է մոտ 23.0%, ինչը բրինձ արտահանող հիմնական երկրում՝ Թաիլանդում ստացված վատ բերքի հետևանք է:

Միջազգային ֆինանսական շուկաներում ձևավորված անորոշություններն ու բացասական տրամադրվածությունները տարվա ընթացքում պարբերաբար հանդիսացել են ոսկու գների կտրուկ աճի պատճառ: 2011 թ. ընթացքում ոսկու միջին գինը կազմել է 1573.2 ԱՄՆ դոլար՝ մեկ տրոյական ունցիայի դիմաց՝ նախորդ տարվա համեմատ աճելով 28.0%-ով: Առավելագույն արժեքին ոսկու գինը տարվա ընթացքում հասել է օգոստոս- սեպտեմբերին (1800-1900 ԱՄՆ դոլար միջակայքում)՝ ԱՄՆ կոնգրեսում պետական պարտքի վերին սահմանի բարձրացման վերաբերյալ որոշման ձգձգման և դրա արդյունքում ԱՄՆ-ի տեխնիկական պարտագանցության (դեֆոլտ) հավանականության պայմաններում:


2011 թ. ընթացքում հիմնական ապրանքատեսակների գների բարձր մակարդակների պահպանման պայմաններում գնաճի մակարդակը բարձր է եղել և՛ զարգացող, և՛ զարգացած երկրներում: Գնաճի բարձր մակարդակը հիմնականում պայմանավորված է եղել և՛ առաջարկի, և՛ պահանջարկի գործոններով: Առաջարկի շուկերը նպաստել են նավթի և պարենի գների աճին, մինչդեռ զարգացող երկրներում աճող եկամուտները պայմանավորել են բարձր պահանջարկ՝ իրենց հերթին բարձրացնելով գները: Ջարգացած երկրների խթանող դրամավարկային քաղաքականությունը ևս նպաստել է գնաճային ճնշումների առաջացմանը:

Ջարգացած երկրներից ԱՄՆ-ում և Եվրոպայում 2011 թվականին գնաճը նկատելի բարձրացել է՝ ընդհուպ մոտենալով, առանձին դեպքերում նաև գերազանցելով կենտրոնական բանկերի սահմանած թիրախային սահմանը: Չնայած դրան՝ տարվա ընթացքում գնաճը իրավասու մարմինների «անհանգստության» առաջնային խնդիր չի դարձել: Գրեթե բոլոր երկրների կենտրոնական բանկերը շարունակել են վարել մեղմ դրամավարկային քաղաքականություն՝ ակնկալելով բարձր գործազրկության և թույլ տնտեսական աճի պայմաններում գնաճային ճնշումների թուլացում: Ի հակադրություն զարգացած երկրների, գնաճն առավել խնդրահարույց է եղել զարգացող երկրների համար: Համաձայն ԱՄՆ գնահատումների՝ 2011 թ. զարգացած երկրներ-


Նավթի («բրենթ» տեսակի) գները
(ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց)




Պղնձի գները
(ԱՄՆ դոլար՝ 1 տոննայի դիմաց)




Մոլիբդենի գները
(1000 ԱՄՆ դոլար՝ 1 տոննայի դիմաց)



Հացահատիկի գները
(ԱՄՆ դոլար՝ 1 բուշելի դիմաց)




Ոսկու գները
(ԱՄՆ դոլար՝ մեկ տրոյական ունցիայի դիմաց)



Աղբյուրը՝ Bloomberg:

Գնաճը մի շարք երկրներում



րուն գնաճը կազմել է 2.7%, իսկ զարգացող երկրներում՝ 7.2% (նախորդ տարի՝ համապատասխանաբար 1.6 և 6.1):

Քիչ թվով երկրների իրավասու մարմիններ, տարվա ընթացքում երկարատև բարձր գնաճային միջավայրի պահպանման մտավախություններից ելնելով, բարձրացրել են վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ միևնույն ժամանակ իրականացնելով մի շարք այլ միջոցառումներ, ինչպիսիք են՝ նավթի և պարենի ներքին արտադրության համար խթանների ստեղծում, պարտադիր պահուստավորման պայմանների խստացում և այլն: 2011 թ. վերջին, հատկապես 2012 թ. սկզբին Չինաստանի և այլ զարգացող երկրների տնտեսական աճի դանդաղման միտումը դրդել է դրամավարկային մարմիններին բարձրաձայնել դրամավարկային քաղաքականության հնարավոր թուլացման մտադրությունների մասին:


Կարճաժամկետ հեռանկարում հիմնական ապրանքատեսակների գների նվազման միտման և համաշխարհային տնտեսության դանդաղ վերականգնման պայմաններում սպասվում է գնաճային թույլ միջավայր:

Տարվա ընթացքում համաշխարհային մակրոտնտեսական զարգացումները, ըստ էության, մեծ ռիսկեր չեն ստեղծել ներքին տնտեսության և ֆինանսական կայունության համար, ինչը մանրամասն նկարագրված է «Մակրոտնտեսական զարգացումներ» ենթաբաժնում:

1.2. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Ռուսաստանի Դաշնություն

Նավթի գնի և ՌԴ արտահանման միտումները



2011 թ. ընթացքում Ռուսաստանի Դաշնության տնտեսությունում վերականգնումը շարունակվել է: Համաձայն ՌԴ տնտեսական զարգացման նախարարության գնահատականի՝ տնտեսական աճը 2011 թ. կազմել է 4.3%: Տնտեսական աճի հիմնական շարժիչներն են հանդիսացել տնտեսության երեք ճյուղերը՝ վերանշակող արդյունաբերություն, առևտուր և գյուղատնտեսություն, ընդ որում՝ վերջինիս նպաստումը ամենանշանակալիցն է եղել: Գյուղատնտեսության կտրուկ վերականգնումը, պայմանավորված նաև նախորդ տարվա վատ եղանակային պայմանների հետևանքով արձանագրված նվազմամբ, ՀՆԱ-ի աճին նպաստել է 0.6 տոկոսային կետով:

Իրական տնօրինվող եկամուտները տարվա ընթացքում ավելացել են 0.8%-ով, իսկ ներդրումները հիմնական կապիտալում նախորդ տարվա համեմատ ավելացել են 6.2%-ով:

Ըստ ծախսային բաղադրիչների՝ ՀՆԱ-ում առավել մեծ աճ է արձանագրել համախառն կուտակումը՝ նպաստելով տնտեսության աճին 5.0 տոկոսային կետով, որից 3.7-ը՝ ապրանքանյութական պաշարների հաշվին: ՀՆԱ-ում ամենամեծ կշիռն ունեցող (48.9%) տնային տնտեսությունների վերջնական սպառումը նպաստել է տնտեսական աճին 3.25 տոկոսային կետով: Ձուտ արտահանման բացասական նպաստումը կազմել է 4.0 տոկոսային կետ՝ հիմնականում պայմանավորված ներմուծման աճի տեմպերի արագացմամբ՝ արտահանման տեմպերի կրճատման պարագայում:

Ըստ տարեկան արդյունքների՝ առևտրային հաշվեկշռի դրական մնացորդը կազմել է 198.1 մլրդ ԱՄՆ դոլար: Արտահանման տարեկան աճը կազմել է 30.2%, մինչդեռ ներմուծման աճը նույն ժամանակահատվածում կազմել է 30.0%:

Վճարային հաշվեկշռի հոսքերի պայմաններում տարվա առաջին երեք եռամսյակների ընթացքում ավելացել են երկրի միջազգային արտարժույթային պահուստները՝ սեպտեմբերին մոտեցել են պատմական ամենաբարձր արժեքին՝ 545.1 մլրդ դոլար, տարեվերջին, սակայն, որոշակի նվազել են և կազմել 498.6 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարեվերջի համեմատ աճելով 4.0%-ով: Տարվա ընթացքում ռուսական ռուբլու փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ միջինը արժեզրկվել է 3.2%-ով: Ընդ որում՝ առաջին կիսամյակի ընթացքում նկատելի է եղել արժևորման միտում՝ հիմնականում պայմանավորված նավթի գների բարձր մակարդակով, ինչպես նաև ԱՄՆ-ի և Եվրոգոտու ոչ բարենպաստ զարգացումներով, սակայն տարեվերջին միտումը վերափոխվել է արժեզրկման՝ պայմանավորված ինչպես նավթի գների կայունացմամբ, այնպես էլ կապիտալի արտահոսքի արագացմամբ:

2011 թ. շարունակվել է կապիտալի զուտ արտահոսքը, որը աննախադեպ է եղել նույնիսկ ճգնաժամային ժամանակահատվածի համեմատ: Ըստ նախնական գնահատումների՝ մասնավոր հատվածից կապիտալի զուտ արտահոսքը կազմել է 84.2 մլրդ ԱՄՆ դոլար՝ ավելի քան 2 անգամ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը (ճգնաժամի ժամանակ կազմել էր 52 մլրդ ԱՄՆ դոլար): Որպես կապիտալի արտահոսքի զլխավոր պատճառ է նշվում ընդհանուր առմամբ՝ համաշխարհային տնտեսությունում, իսկ մասնավորապես՝ Եվրոգոտում ձևավորված տնտեսական անորոշությունը և անկայունությունը: Կանխատեսումների համաձայն կապիտալի ակտիվ արտահոսքը կշարունակվի նաև 2012թ. առաջին կիսամյակում:


Գործազրկության մակարդակը տարվա ընթացքում նվազել է և տարեվերջին կազմել է տնտեսապես ակտիվ բնակչության 6.6%-ը, իսկ բնակչության իրական տնօրինվող եկամուտների աճը զգալի չի եղել:

Տարվա առաջին կեսին առկա էին լուրջ գնաճային ճնշումներ, սակայն տարեվերջին գնաճը կազմել է 6.1%, որը ոչ միայն զիջում է մի շարք ԱՊՀ և այլ զարգացող երկրների ցուցանիշին, այլև ընդհանրապես ամենացածր ցուցանիշն է ՌԴ-ի համար:

Գնաճային ճնշումները և բարձր գնաճային սպասումները մեղմելու նպատակով Ռուսաստանի կենտրոնական բանկը վերաֆինանսավորման տոկոսադրույքը առաջին կիսամյակում ընդհանուր հաշվով բարձրացրել է 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 8.25%, տարեվերջին, սակայն, նշված ռիսկերի չեզոքացման պարագայում և ֆինանսական համակարգի կայունության նկատառումներից ելնելով՝ տոկոսադրույքը նվազեցրել է՝ սահմանելով 8.0% մակարդակ:

Ֆինանսական հատվածում դրսևորվել են հետևյալ զարգացումները: Տարեկան կտրվածքով 29.6%-ով աճել են վարկավորման ծավալները, մասնավորապես՝ իրավաբանական անձանց վարկավորումն ավելացել է 26.6%-ով, իսկ ֆիզիկական անձանց վարկավորումը՝ 35.8%-ով: Վատորակ վարկերի տեսակարար կշիռը նվազել է՝ տարեվերջին կազմելով 3.9% (2010 թ.՝ 4.7%): Ֆինանսական հաստատությունների համախառն շահույթը, ըստ 2011 թ. արդյունքների, տ/տ աճել է 1.5 անգամ:

Ռուսական ռուբլու միջին ամսական փոխարժեքը



Աղբյուրը՝ ՌԴ ֆինանսների նախարարություն:

Թուրքիա

2011 թ. Թուրքիայի տնտեսության համար կարելի է բնութագրել որպես տնտեսական աճի շարունակական վերականգնման շրջան, որն ուղեկցվել է կայուն մակրոտնտեսական հիմնարարներով, կապիտալի շարունակական ներհոսքով, ցածր տոկոսադրույքներով և վարկավորման բարձր աճով: 2011 թ. տնտեսական աճի ցուցանիշը բավականին բարձր է եղել՝ 8.5%, թեև տարվա ընթացքում ունեցել է նվազող բնույթ: Տնտեսական աճին առավել մեծ նպաստում է ունեցել ներքին պահանջարկի աճը: Ներքին վարկավորման բարձր աճը նպաստել է ներմուծման զգալի աճին, որը տարեկան արդյունքներով էապես գերազանցել է արտահանման աճը՝ առավել խորացնելով առևտրային հաշվեկշռի պակասուրդը: Արտահանման տ/տ աճը կազմել է 18.5%, իսկ ներմուծման աճը՝ 29.8%, առևտրային հաշվեկշռի պակասուրդը կազմել է 105.9 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 47.7%-ով: Ընթացիկ հաշվի պակասուրդը, ըստ գնահատումների, կկազմի ՀՆԱ 10%-ը (նախորդ տարվա ցուցանիշը՝ 6.5%):

Աշխատանքի շուկայում զարգացումները դրական են եղել. 2011 թ. դեկտեմբերին գործազրկության մակարդակը ընդհուպ մոտեցել է նախաճգնաժամային մակարդակին՝ կազմելով 9.1% (նախորդ տարվա 11.4%-ի փոխարեն):

Համաշխարհային տնտեսության զարգացումների և նվազող կապիտալ հոսքերի պայմաններում շարունակաբար դրսևորվել են թուրքական լիրայի արժեզրկման ճնշումներ. թուրքական լիրայի միջին անվանական փոխարժեքը տ/տ արժեզրկվել է 11.6%-ով:

2011 թ. բնութագրվել է նաև բարձր գնաճային միջավայրի առկայությամբ, մասնավորապես՝ 12-ամսյա գնաճը կազմել է 10.5%՝ նախորդ տարվա 6.4%-ի փոխարեն: Բարձր գնաճային ճնշումների ներքո Թուրքիայի կենտրոնական բանկը տարվա ընթացքում վարել է խիստ դրամավարկային քաղաքականություն՝ միաժամանակ պարբերաբար բարձրացնելով պարտադիր պահուստավորման նորմատիվը: Տարեվերջին ԴՔ տոկոսադրույքը ձևավորվել է 5.75% մակարդակում:

Տարվա ընթացքում արձանագրվել է բանկային համակարգի կողմից վարկավորման 29.5% աճ: Միաժամանակ 1.0 տոկոսային կետով նվազել է չափսատող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկային պորտֆելում և կազմել 2.7%: 2011 թ. բանկային համակարգի շահույթը կազմել է 19.8 մլրդ թուրքական լիրա, որը զիջում է նախորդ տարվա ցուցանիշին 2.3 մլրդ թուրքական լիրայով:

Վրաստան

Ըստ նախնական տվյալների՝ Վրաստանի տնտեսությունում արձանագրվել է 7.0% իրական աճ: Առավել բարձր աճ է գրանցվել վերամշակող արդյունաբերության և առևտրի ոլորտներում:

Արտաքին առևտուրը նկատելի ակտիվ է եղել, արձանագրվել է արտահանման 39.1% և ներմուծման 34.5% աճ, որի արդյունքում առևտրային հաշվեկշռի պակասուրդը փոքրացել է նախորդ տարվա նկատմամբ՝ կազմելով ՀՆԱ 25.6%-ը (2010 թ. կազմել էր 41.8%):

Վրաստանի տնտեսության շարունակական վերականգնմամբ պայմանավորված՝ սկսել է ավելանալ ՕՌՆ-երի ներհոսքը. տա-

Ֆինանսական շուկաներում անորոշությունը և բացասական սպասումները հիմնականում պայմանավորված են եղել բյուջետային և պարտքային հիմնախնդիրներով երկրներում իրավիճակի սրմամբ, ինչպես նաև իրավիճակի կարգավորմանն ուղղված պետական միջոցառումների ոչ բավարար արդյունավետությամբ: Պարտքային հիմնախնդիրների հավանական հետևանքները հաշվի առնելով՝ վարկանշային կազմակերպությունները պարբերաբար նվազեցրել են խնդրահարույց երկրների, այդ թվում՝ ավանդաբար ամենաբարձր վարկանիշ ունեցող երկրների վարկանիշերը: Այդ նվազեցումները լրացուցիչ ցնցումներ ու բացասական ազդակներ են փոխանցել ֆինանսական շուկաներին:

2011 թ. միջազգային վարկանշային կազմակերպությունները նվազեցրել են մի շարք երկրների վարկանիշերը

Moody's վարկանշային կազմակերպությունը՝

- Պետական պարտքի վերին սահմանի բարձրացման անհամաձայնություններով և արդյունքում ԱՄՆ-ի տեխնիկական պարտազանցության հավանականությամբ պայմանավորված՝ ԱՄՆ-ի՝ ամենաբարձրը համարվող սուվերեն վարկանիշը AAA-ից նվազեցվել է AA+
- Հոկտեմբերին իջեցվել է Իսպանիայի վարկանիշը՝ Aa2-ից մինչև A1 (բացասական հեռանկար)
- Իտալիայինը՝ Aa2-ից՝ A2 (բացասական հեռանկար)

2012 թ. փետրվարին միանգամից նվազեցվել են 9 եվրոպական երկրների վարկանիշերը՝

- Ավստրիա - Aaa կայուն հեռանկարից՝ բացասական հեռանկարի
- Ֆրանսիա - Aaa կայուն հեռանկարից՝ բացասական հեռանկարի
- Մալթա - A2-ից՝ A3 (բացասական հեռանկարով)
- Իտալիա - A2-ից՝ A3 (բացասական հեռանկարով)
- Իսպանիա - A1-ից՝ A3 (բացասական հեռանկարով)
- Պորտուգալիա - Ba3-ից՝ Ba2 (բացասական հեռանկարով)
- Սլովակիա - A1-ից՝ A2 (բացասական հեռանկարով)
- Սլովենիա - A1-ից՝ A2 (բացասական հեռանկարով)
- Մեծ Բրիտանիա - կայուն հեռանկարից՝ բացասական հեռանկարի

S&P-ն 2011 թ. ընթացքում իջեցրել է Իսպանիայի, Հունաստանի, Պորտուգալիայի և Իտալիայի սուվերեն վարկանիշերը:

2011 թվականին միջազգային կազմակերպությունների և կառավարությունների կողմից ձեռնարկված հիմնական միջոցառումները

Պարտքային հիմնախնդիրները մեղմելու և դրանց որոշակի լուծում տալու նպատակով պետական և միջազգային մակարդակով իրականացվել են աջակցության տարբեր միջոցառումներ և ծրագրեր.

- *Բանկային համակարգի բարեփոխումներ:* Հաշվետու տարվա ընթացքում եվրոպական բանկային միությունը (EBA) հաստատել է կարգավորման նոր պահանջներ, համաձայն որոնց՝ բանկերը պետք է իրենց ակտիվներում զտնվող պետական պարտատոմսերը վերագնահատեին սեպտեմբեր ամսվա շուկայական արժեքով: Դա կնվազեցներ բանկերի կապիտալը ընդհանուր առմամբ 115 մլրդ եվրոյի չափով: Բանկերը նաև պետք է 2012 թ. 1-ին կիսամյակի ընթացքում ընդհանուր կապիտալը բարձրացնեն մինչև ռիսկով կշռված ակտիվների 9% մակարդակը:


- *Դոլարային շուկաներին և ԵԿԲ ֆինանսավորմանը բանկերի հասանելիության մեծացում:* Դաշնային պահուստային համակարգը, ԵԿԲ-ը, ինչպես նաև Կանադայի, Անգլիայի, Ճապոնիայի և Շվեյցարիայի կենտրոնական բանկերը ձեռնարկել են համատեղ քայլեր՝ ֆինանսական շուկաներում իրացվելիության ապահովման նպատակով: Դաշնային պահուստային համակարգը նվազեցրել է վերոնշյալ կենտրոնական բանկերի հետ սվոփ տոկոսադրույքը 50 բազիսային կետով, որը կենտրոնական բանկերին հնարավորություն է ընձեռում իջեցնելու առևտրային բանկերին դոլարով ֆինանսավորման տոկոսադրույքը:
- *Եվրոպական ֆինանսական կայունության հիմնադրամի հնարավորությունների մեծացում:* Եվրոպական երկրների կառավարությունները համաձայնվել են հիմնադրամի վարկավորման հնարավորությունները մեծացնել մինչև 1 տրլ եվրո՝ միաժամանակ ստեղծելով երաշխավորագրեր՝ խնդրահարույց երկրների նոր թողարկած պարտատոմսերի 30% ծածկույթով:
- *Խնդրահարույց երկրներին օգնության տրամադրման ծրագրերի մեկնարկ:* ԱՄՅ-ը, ԵՄ-ի հետ համատեղ, հաստատել է Պորտուգալիային աջակցության փաթեթի տրամադրման ծրագիրը, այնուհետև ԵՄ-ը հաստատել է նաև Հունաստանին աջակցության տրամադրման ծրագիրը:
- *Համաեվրոպական հարկաբյուջետային համաձայնագրի ընդունման նախագիծ:* Եվրոպայի՝ քաղաքականությունը իրականացնող մարմինները տարեվերջին համաձայնության եկան՝ ստեղծելու հարկաբյուջետային ֆեդերալիզմ, ինչը մասնավորապես ենթադրում է կառուցվածքային պակասուրդի սահմանափակում ՅՆԱ 0.3%-ի չափով:

Պետական պարտքի և բյուջեի պակասուրդի խորացող հիմնախնդիրները զարգացող երկրներին պարտադրել են խստացնել հարկաբյուջետային քաղաքականությունը, ինչն իր հերթին որոշակի զսպողական ազդեցություն է ունեցել այդ երկրների տնտեսությունների արագ աճի վրա: Ջարգացող և զարգացած որոշ երկրներ խստացրել են նաև դրամավարկային քաղաքականության պայմանները՝ հիմնականում տարվա առաջին կեսին:

Տնտեսությունների գերտաքացման վտանգը և գնաճային բարձր միջավայրը մեղմելու նպատակով հիմնական զարգացող երկրները (Չինաստան, Բրազիլիա, Ռուսաստան և այլն) հատկապես տարվա առաջին կեսին շարունակաբար բարձրացրել են քաղաքականության տոկոսադրույքը: ԵԿԲ-ը ևս, իր առաջնային խնդրից ելնելով, առաջին կիսամյակի ընթացքում երկու անգամ հաջորդաբար խստացրել է դրամավարկային պայմանները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանելով 1.5%: Տարեվերջին, սակայն, գնաճային չափավոր ճնշումները և տնտեսական թույլ աճը հնարավորություն են տվել վերադառնալու մեղմ դրամավարկային քաղաքականությանը, և քաղաքականության տոկոսադրույքը ձևավորվել է նախկին 1% մակարդակում: Մեղմ դրամավարկային քաղաքականություն շարունակել են իրականացնել Դաշնային պահուստային համակարգը և Անգլիայի բանկը: Համաշխարհային տնտեսության վերականգնման ներկա տենպերի և առկա կառուցվածքային հիմնախնդիրների պայմաններում առանցքային երկրներում տոկոսադրույքի բարձրացում կարճաժամկետ հեռանկարում չի ակնկալվում:


Բազային ցածր տոկոսադրույքները և համաշխարհային մասշտաբով ներդրումային թույլ պահանջարկն իրենց հերթին ապահովել են միջբանկային տոկոսադրույքների ցածր մակարդակ:

Միջբանկային տոկոսադրույքները




Աղբյուրը՝ Bloomberg:

Կենտրոնական բանկերի տոկոսադրույքների քաղաքականությունը




Աղբյուրը՝ ԱՄՅ:

10 տարի ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը




Աղբյուրը՝ Bloomberg:

ԱՄՆ դոլարի փոխարժեքը Եվրոյի և ՄԲ ֆունտ ստեռլինգի նկատմամբ



Աղբյուրը՝ Bloomberg:

Բորսայական ինդեքսները



Աղբյուրը՝ Bloomberg:

Անորոշության և ցածր ներդրումային վստահության պայմաններում տարվա ընթացքում պահպանվել է ԱՄՆ պետական պարտատոմսերի, այլ վստահելի ակտիվների (ոսկի, նավթ) բարձր պահանջարկը:

Տարվա ընթացքում ԱՄՆ և Եվրոգոտու տնտեսությունների տատանողական զարգացումներին զուգընթաց, երկրների արժույթների վարքագիծը ևս տատանողական է եղել: ԱՄՆ դոլարը զգալի արժեզրկվել է Եվրոյի նկատմամբ հիմնականում երրորդ եռամսյակում: Տարեվերջին, պայմանավորված Եվրոպական երկրների խնդիրների հստակ լուծումների բացակայությամբ և ԱՄՆ դրական մակրոտնտեսական զարգացումներով, ԱՄՆ դոլարը նկատելի արժևորվել է: Այնուամենայնիվ, տարվա կտրվածքով ԱՄՆ դոլարի միջին արժեզրկումը կազմել է 4.8%: Ջարգացող երկրներում կապիտալի ներհոսքի և զսպող դրամավարկային քաղաքականության պայմաններում գերակշռող են եղել ազգային արժույթների արժևորման ճնշումները:

Ջարգացած և զարգացող երկրների բորսայական ինդեքսները, տնտեսական փոփոխություններին համապատասխան, տարվա ընթացքում դրսևորել են տատանողական վարքագիծ. միջինում, ընդհանուր առմամբ, արձանագրվել է որոշակի աճ:

2011 թ. ընթացքում կապիտալի ներհոսքը զարգացող երկրներ թեև շարունակվել է, սակայն էապես զիջել է նախորդ տարվա տեմպերին: Կապիտալի ներհոսքի դանդաղում հիմնականում արձանագրվել է տարվա երկրորդ կեսին. 2011 թ. երկրորդ կիսամյակի ընթացքում համախառն կապիտալ ներհոսքը զարգացող երկրներ կազմել է 170 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2010 թ. նույն ժամանակահատվածի 309 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն (45.0% նվազում): Նվազումը հիմնականում պայմանավորված է դեպի Բրազիլիա և Չինաստան հոսքի կրճատմամբ:

2011 թ. մասնավոր կապիտալի ներհոսքը կրճատվել է 9.6%-ով: Մասնավորապես՝ զարգացող երկրներ ուղղվող պորտֆելային ներդրումների նվազումը 2011 թ. գնահատվում է 60.0%, միևնույն ժամանակ ՕՈՒՆ-երի ներհոսքն ավելացել է երկրների տնտեսական աճին զուգընթաց և ըստ գնահատումների՝ 2011 թ. կազմել է 10.6%: ՕՈՒՆ-երի ներհոսքը, համաձայն կանխատեսումների, նախաճգնաժամային մակարդակին կհասնի միայն 2013 թվականին (620.3 մլրդ ԱՄՆ դոլար): Ընդհանուր առմամբ նախատեսվում է, որ զուտ մասնավոր կապիտալի ներհոսքը զարգացող երկրներ 2013 թ. կհասնի 1.02 տրլն ԱՄՆ դոլարի, սակայն վերջինիս կշիռը այդ երկրների ՅՆԱ-ում 2010 թ. 5.4%-ից կնվազի մինչև 3.7%:

ԱՄՓՈՓՈՒՄ

2011 թ. շարունակվել է համաշխարհային տնտեսական ակտիվության վերականգնումը, թեև գերակշռող են եղել նվազման ուղղությամբ ռիսկերը՝ ի վերջո տարեկան կտրվածքով հանգեցնելով տնտեսական աճի՝ կանխատեսվածից ցածր մակարդակի: Գերակշռող և կառուցվածքային հիմնախնդիրներ են շարունակել մնալ տնտեսական աճի անհամաչափությունները, գործազրկության բարձր մակարդակը, պարտքային հիմնախնդիրների խորացումն ու զների անկայուն մակարդակի պահպանումը: Համաշխարհային տնտեսական աճի կայունության և շարունակականության ապահովման համար անհրաժեշտ են պետական պարտքի, բյուջեի պակասուրդի հետ կապված հիմնախնդիրների արմատա-

կան լուծում, հակաճգնաժամային միջոցառումների՝ համապատասխան ծավալներով և ժամանակին կիրարկում, որոնք, ըստ էության, ընթացիկ տարում ձախողվեցին:

Ֆինանսական շուկաները դրսևորել են տատանողական վարքագիծ ողջ տարվա ընթացքում՝ հիմնականում պայմանավորված պարտքային հիմնախնդիրներով երկրների իրավիճակով և ընթացիկ զարգացումներով:

Ձարգացող երկրներում, ի հակադրություն նախորդ տարիների առաջանցիկ տնտեսական աճի, ընթացիկ տարում նկատվել են տնտեսական աճի դանդաղման միտումներ, որոնք, ըստ ամենայնի, համաշխարհային տնտեսության ներկա զարգացումների պայմաններում կունենան շարունակական բնույթ: 2012 թ. համար ԱՄՆ-ն կանխատեսում է 3.3% տնտեսական աճ՝ ընդգծելով, որ մեծ են տնտեսական աճի կայունության ռիսկերը: Համաշխարհային տնտեսական աճի ներկա մակարդակը բավարար չի լինի աշխատանքի շուկայի վերականգնման համար, ինչպես նաև կնպաստի համաշխարհային առևտրի աճի տեմպերի դանդաղմանը: Հաշվետվության հրապարակման պահին արդեն իսկ տեղ են գտել որոշակի դրական զարգացումներ՝ հիմնականում զարգացած երկրներում: Այդ առնչությամբ որոշ միջազգային կառույցներ, մասնավորապես՝ ՏՀԶԿ-ն՝ աճման ուղղությամբ է վերանայել G7 երկրների տնտեսական աճի կանխատեսումները, միաժամանակ շեշտելով, որ դեռևս անորոշության աստիճանը բարձր է:

Համաշխարհային տնտեսության զարգացումները ընթացիկ տարում, ընդհանուր առմամբ, մեծ ռիսկեր չեն ստեղծել ՀՀ ներքին տնտեսության և ֆինանսական կայունության համար:

Արդյունաբերական մետաղների գների բարձր մակարդակը նպաստել է արդյունաբերական արտադրանքի աճին, իսկ գործընկեր երկրների զարգացումները պայմանավորել են արտահանման և բնակչության եկամուտների աճը:

Տարեվերջին հիմնական ապրանքների միջազգային գների աստիճանական նվազումն իր հերթին չեզոքացրել է արտաքին միջավայրից բխող գնաճային ճնշումները:

Հարևան երկրների զարգացումներից առավել հատկանշական են ՌԴ-ից Հայաստան ներհոսող մասնավոր տրանսֆերտների, գործոնային եկամտի, ինչպես և արտաքին ապրանքաշրջանառության աճը, որոնք նպաստել են տնային տնտեսությունների և կազմակերպությունների եկամուտների աճին՝ բարձրացնելով վերջիններիս վարկունակությունը: Ռուսաստանում և Վրաստանում արձանագրված մասնավոր պահանջարկի աճը պայմանավորել է նաև Հայաստանից արտահանվող վերամշակող արդյունաբերության արտադրանքի ծավալների աճը:

ՀՀ առևտրային բանկերը օտարերկրյա արժեթղթերում ներդրումներ գրեթե չունեն, ուստի միջազգային ֆինանսական շուկաների զարգացումները Հայաստանի բանկային համակարգում գնային ռիսկը չեն մեծացրել: Ֆինանսական շուկաների զարգացումները չեն խոչընդոտել նաև Հայաստանի բանկային համակարգի արտաքին աղբյուրներից (հիմնականում մայր բանկերից) դրամական միջոցների զուտ ներհոսքի ապահովմանը:

* ՏՀԶԿ (OECD) - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն:

2. ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

2.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

2011 թ. ՀՀ տնտեսական աճը կազմել է 4.6%: Տնտեսական ակտիվության առավել արագ վերականգնում գրանցվել է երկրորդ կիսամյակում (երրորդ եռամսյակի տնտեսական աճը կազմել է 6.5%, չորրորդ եռամսյակինը՝ համապատասխանաբար 5.0% է), առաջին կիսամյակի տնտեսական աճը կազմել է ընդամենը 2.7%: Տնտեսական աճը հիմնականում պայմանավորվել է արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի աճով:

Տարվա ընթացքում արդյունաբերության ճյուղի ավելացված արժեքի աճը կազմել է 15.9%՝ մեծամասամբ պայմանավորված առաջին կիսամյակում մետաղների միջազգային գների աճով և համաշխարհային տնտեսության որոշակի վերականգնման ներքո արդյունաբերական պահանջարկի ակտիվացմամբ: Առավել մեծ նպաստում են ունեցել մետաղական հանքաքարի արդյունահանման, սննդամթերքի և խմիչքների ենթաճյուղերը, ինչը, ըստ ամենայնի, փաստում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պահանջարկի վերականգնման մասին:


2010 թ. գյուղատնտեսության ճյուղի ոչ բարենպաստ զարգացումների համեմատ՝ ընթացիկ տարում այս ճյուղում ավելացված արժեքի տ/տ աճը կազմել է 13.7%: Բարձր աճը հիմնականում պայմանավորել է բուսաբուծությունում արձանագրված 26.6% աճը: Անասնապահության ենթաճյուղում աճը կազմել է 0.1%:

Շինարարության ճյուղում շարունակվել է նախորդ տարիներին արձանագրված անկումը. շինարարության ավելացված արժեքի տ/տ նվազումը կազմել է 12.3%: Ընդ որում՝ նվազել են գրեթե բոլոր ֆինանսավորման աղբյուրների հաշվին իրականացվող շինարարության ծավալները՝ բացառությամբ պետական բյուջեի և համայնքների միջոցների հաշվին շինարարության: Առավել մեծ չափով նվազել են միջազգային վարկերի (41.4%), բնակչության միջոցների (32.2%) և կազմակերպությունների (23.4%) հաշվին իրականացված շինարարության ծավալները: Միջազգային վարկերի հաշվին իրականացվող շինարարության ծավալների նվազումը պայմանավորվել է մի շարք խոշոր շինարարական ծրագրերի ավարտով, ինչպես նաև որոշ խոշոր ծանապարհաշինարարական նախագծերի հետաձգմամբ: Բնակարանաշինության ոլորտում շարունակվող անկումն իր հերթին փաստում է բնակչության եկամուտների վերականգնման ոչ բավարար տեմպերի մասին. եկամտի հիմնական մասն ուղղվում է սպառման ծախսերին՝ դեռևս չստեղծելով ներդրումային պահանջարկ:

Ծառայությունների ոլորտի աճը 2011 թ. կազմել է տ/տ 3.7%՝ պայմանավորված և՛ մանրածախ, և՛ մեծածախ առևտրի ծավալների համապատասխանաբար 2.2% և 5.5% աճով, ինչը, ըստ էության, վկայում է մասնավոր պահանջարկի և բնակչության եկամուտների որոշակի վերականգնման մասին:


2011 թ. ընթացքում ընդհանուր տնտեսական միջավայրի ակտիվացման և դրական սպասումների ներքո վարկային շուկայի ակտիվությունը պահպանվել է: Բնականաբար, վարկավորման բարձր աճը մեծապես պայմանավորել է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի, ինչպես նաև տնային տնտեսությունների մասնավոր սպառման աճը՝ խթանելով համապատասխանաբար համախառն առաջարկն ու համախառն պահանջարկը:

Տնտեսության հիմնական ճյուղերի տարեկան աճը



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

Տնտեսության հիմնական ճյուղերի վարկավորման աճը



* Գրաֆիկում «Ծառայություններ» ճյուղը ներառում է առևտրի և ծառայության այլ հատվածների ցուցանիշների համագումարը:

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի հարցմանը² մասնակցած առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների՝ վերջիններս շարունակել են պարզեցնել վարկերի տրամադրման պայմաններն ու ընթացակարգերը: Վարկավորման պայմաններն առավել մատչելի են դարձել հատկապես տարվա առաջին կեսին, և որպես հիմնական գործոններ նշվել են բանկերի միջև մրցակցային ճնշումները, առավել մատչելի ֆինանսական միջոցների հասանելիությունը, ինչպես նաև բանկերի կողմից վարկային պորտֆելի բազմազանեցմանն ուղղված ծրագրերի իրականացումը: Տրված բաց հարցերի հիման վրա հնարավոր է եղել փաստել, որ վարկավորման առավել բարենպաստ ծյուղեր են հանդիսացել առևտրի, էլեկտրաէներգիայի և կապի ոլորտները, մինչդեռ շինարարության և գյուղատնտեսության ոլորտները համարվել են եկամտաբերության տեսանկյունից ոչ շատ գրավիչ:


Բանկային համակարգի վարկավորման 36% աճի պայմաններում չաշխատող վարկերի կշիռը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել՝ տարեվերջին կազմելով 3.2%:

2011 թ. չորս եռամսյակների հարցումների³ համաձայն՝ բաղադրյալ տնտեսական ինդեքսներն ունեցել են զարգացման տարբեր միտումներ: Մասնավորապես՝ տնտեսական ակտիվության ինդեքսը տարվա ընթացքում արձանագրել է աճ՝ նվազելով միայն չորրորդ եռամսյակում՝ պայմանավորված սպառման ենթահինդեքսի և ներդրումներ իրականացնելու պատրաստակամության նվազմամբ, որը նաև պայմանավորված է եղել սեզոնային գործոնով, այն է՝ մշտապես զբանցվող նախատոնական ակտիվությամբ: Գործարար միջավայրի բաղադրյալ ինդեքսի նվազող վարքագիծը հիմնականում բացատրվում է գրեթե բոլոր ծյուղերում ռիսկերի սպասման գնահատականի վատացմամբ:

Ի հակադրություն փոփոխությունների վերաբերյալ գործարարների սպասումների, սպառողների սպասումներն առավել լավատեսական են: Նախորդ տարվա համեմատությամբ սպառողների վստահության ինդեքսը աճել է առաջին երեք եռամսյակների ընթացքում, սակայն վերջին եռամսյակում գրանցվել է նվազման միտում: Վերջին եռամսյակի նվազումը պայմանավորվել է գլխավորապես ապագա պայմանների ինդեքսի 10.7% նվազմամբ, ինչի պատճառ են հանդիսացել գալիք եկամուտների, խոշոր գնումներ իրականացնելու և զբաղվածության աճի վերաբերյալ տնային տնտեսությունների բացասական սպասումները:

ՀՆԱ ծախսային բաղադրիչների տեսանկյունից, սպառման տարեկան իրական աճը կազմել է 3.1%: Վերջինս պայմանավորվել է բնակչության եկամուտների և տնտեսական ակտիվության որոշակի աշխուժացմամբ, ինչը հիմնականում մասնավոր տրանսֆերտների ներհոսքի, աշխատավարձի աճի տեմպերի և սպառողների վստահության վերականգնման արդյունք է: Ընդ որում՝ սպառման աճը պայմանավորվել է ինչպես մասնավոր սպառման աճով (2.4%), այնպես էլ պետական սպառման աճով՝ 5.4%: Ի հակադրություն սպառման, տարվա ընթացքում շարունակաբար նվազել են կապիտալ ներդրումները՝ -11.2%-ով, հիմնականում շինարարության ոլորտում տեղի ունեցող զարգացում-

ՀՆԱ ծախսային բաղադրիչները
(տեսակարար կշիռը ՀՆԱ-ում)




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

² Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ կողմից 2011 թ. չորս եռամսյակներում անցկացված «ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի վերաբերյալ» հարցման ամփոփումներ:

³ ՀՀ ԿԲ կողմից անցկացվող հարցումների հիման վրա հաշվարկվող բաղադրյալ տնտեսական ինդեքսներ (մանրամասն տես՝ ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում)

Արտաքին պարտքի ծավալը և արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

ների հաշվին: Մասնավոր ներդրումների նվազում հիմնականում արձանագրվել է տարվա երկրորդ կեսին, արդյունքում տարեկան նվազումը կազմել է 5.5%, ինչը և արտացոլում է տնտեսական ակտիվության ինդեքսի դինամիկան: Պետական ներդրումների նվազող միտումը հիմնականում պակասուրդի կրճատմանն ուղղված քաղաքականության հետևանք է:

Ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի և ՀՆԱ ծավալների աճի պայմաններում զուտ արտահանման նպաստումը ՀՆԱ-ին եղել է դրական:

2011 թ. պետական պարտքի ծավալը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 12.4%-ով և կազմել 3708.9 մլն ԱՄՆ դոլար: Արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 36.2%. Նախորդ տարվա նկատմամբ արձանագրվել է փոքր աճ: Դրական զարգացումներ են գրանցել նաև պարտքի կայունությունը բնութագրող ցուցանիշները՝ հիմնականում ի հաշիվ պարտքի ծավալների նկատմամբ արտահանման և տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի:


Որոշակի փոփոխության է ենթարկվել նաև արտաքին պետական պարտքի կառուցվածքը: 2011 թ. ընթացքում պետական պարտքի ծավալում արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը թեև դանդաղ, սակայն շարունակել է նվազել՝ կազմելով 57.6%: Ընդհանուր պետական վարկերում փոփոխություն չի կրել լողացող տոկոսադրույքով վարկերի կշիռը՝ 36.6%:

ՀՀ պարտքը բնութագրող դրական ցուցանիշներ

Ցուցանիշ	2005:	2006:	2007:	2008:	2009:	2010:	2011:
Պարտք/ՀՆԱ (սահման 50%)	22%	19%	16%	14%	34.7%	35.1%	36.2%
Պարտք/արտահանում	78% (նվազ պարտքի բեռ):	80% (նվազ պարտքի բեռ):	82% (նվազ պարտքի բեռ):	90% (նվազ պարտքի բեռ):	227% (միջին պարտքի բեռ):	182.1% (միջին պարտքի բեռ):	154.0% (միջին պարտքի բեռ):
Պարտքի սպասարկում/արտահանում	4.6% (նվազ պարտքի բեռ):	4.2% (նվազ պարտքի բեռ):	2.9% (նվազ պարտքի բեռ):	3.1% (նվազ պարտքի բեռ):	6% (նվազ պարտքի բեռ):	5.0% (նվազ պարտքի բեռ):	4.2% (նվազ պարտքի բեռ):
Տոկոսավճար/արտահանում	0.9% (նվազ պարտքի բեռ):	0.7% (նվազ պարտքի բեռ):	0.6% (նվազ պարտքի բեռ):	0.7% (նվազ պարտքի բեռ):	2.0% (նվազ պարտքի բեռ):	2.4% (նվազ պարտքի բեռ):	2.1% (նվազ պարտքի բեռ):

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն (Պետական պարտքի մասին հաշվետվություն, 2011թ.)

Սպառողական զների և ներմուծված ապրանքների զների ինդեքսները



* Ներմուծման զների ինդեքսի նոր մեթոդաբանությամբ հաշվարկը ԱՎԾ կողմից սկսվել է 2007 թ., 2002-2006 թթ. ցուցանիշները գնահատվել են Կենտրոնական բանկի կողմից՝ ԱՎԾ հրապարակած՝ հին մեթոդաբանությամբ հաշվարկված ներմուծման զների ինդեքսի հիման վրա:

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ԱՎԾ:

2011 թ. ներքին տնտեսության դրական զարգացումներն անդրադարձել են նաև ՀՀ պետական բյուջեի վրա: Բյուջեի եկամուտների հավաքագրումների աճ է նկատվել ողջ տարվա ընթացքում. բյուջեի ընդհանուր եկամուտները տ/տ աճել են ավելի քան 12.0%-ով, մինչդեռ ծախսերի աճը կազմել է ընդամենը 3.0%, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդի նվազման միտումը շարունակվել է նաև հաշվետու տարում՝ տ/տ 36.8%-ով և կազմել (ԾԻԳ-ի միջոցները ներառյալ) 109348.5 մլն դրամ: Հարկային եկամուտների աճը կրկին բարձր է եղել՝ 10.1%, իսկ առավել արագ աճել են շահութահարկից ստացվող եկամուտները՝ 25.7%: Ծախսերի կազմում ավելացել են գրեթե բոլոր ծախսային հոդվածները:

Բյուջեի պակասուրդը ծախսերի նկատմամբ եկամուտների առաջանցիկ աճի և տնտեսական աճի պայմաններում նախորդ տարվա 2.9%-ի նկատմամբ փոքր-ինչ նվազել է՝ կազմելով ՀՆԱ 2.8%-ը:

Դեռևս նախորդ տարվա երկրորդ կեսից հիմնական պարենա-
 յին և հումքային ապրանքների միջազգային գների, ինչպես նաև
 գյուղատնտեսական ապրանքների առաջարկի կտրուկ նվազման
 հետևանքով վերջիններիս գների բարձրացմամբ պայմանավոր-
 ված՝ 2011 թ. հատկապես առաջին կիսամյակում գերիշխող է եղել
 բարձր գնաճային միջավայրը, որը, տարվա երկրորդ կեսից սկսել
 է թուլանալ: Արդյունքում՝ արտաքին աշխարհից փոխանցվող
 գնաճային ճնշումների մեղմման, գյուղատնտեսության ոլորտում
 դրական զարգացումների և ամբողջական պահանջարկով պայ-
 մանավորված գնաճային ճնշումների բացակայության պայման-
 ներում տարեվերջին հնարավոր եղավ ապահովել թիրախային
 միջակայքում գտնվող գնաճ՝ 4.7%:

2011 թ. ընթացքում ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի
 նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը չի փոփոխվել՝ կազմել
 է 372.42 ԱՄՆ դոլար/դրամ, թեև վերջին եռամսյակում նկատվել է
 արժեզրկման միտում:

2.2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁴


Համաշխարհային և ներքին տնտեսությունների զարգացում-
 ների պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ
 տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բարելավվել է և,
 ըստ գնահատումների, կազմել ՀՆԱ 11.0%-ը՝ նախորդ տարվա
 14.5%-ի փոխարեն: Արտաքին ապրանքաշրջանառության ծավա-
 լը ավելացել է 14.4%-ով և կազմել 5.48 մլրդ ԱՄՆ դոլար:

Ապրանքների և ծառայությունների ներմուծման աճը կազմել է
 տ/տ 13.7%, մինչդեռ իրական աճը⁵ կազմել է ընդամենը 0.7%:
 Ներմուծման աճ հիմնականում արձանագրվել է տարվա երկրորդ
 կեսին, մինչդեռ առաջին կիսամյակում գրանցվել էր ներմուծման
 ծավալների կրճատում:

Տարվա ընթացքում աճն առավել զգալի է եղել «Հանքահում-
 քային արտադրանք», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր,
 թանկարժեք մետաղներ և այլ իրեր», «Վերգետնյա, օդային և
 ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծ-
 ման ծավալներում, մինչդեռ նվազել են «Սեքենաներ, սարքավոր-
 ումներ և մեխանիզմներ» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրան-
 ցից իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալները, որոնցից
 առաջինը, թերևս, բացատրվում է տնտեսավարող սուբյեկտների
 թույլ ներդրումային ակտիվությամբ:


Ապրանքների և ծառայությունների արտահանման տարեկան
 աճը կազմել է 24.1%⁶: Արտահանման բարձր աճը պայմանավոր-
 վել է միջազգային շուկաներում հումքային ապրանքների գների՝
 հիմնականում առաջին կիսամյակի աճով, ինչպես նաև ար-
 դյունաբերության ճյուղում արձանագրված բարձր աճով: Արտա-
 հանման աճին առավել մեծ նպաստում են ունեցել արտահան-
 ման հիմնական մաս կազմող ապրանքատեսակների բարձր
 գները, քանզի արտահանման դոլարային արժեքի աճը կազմել է
 25.0%: Արտահանման կառուցվածքում հիմնականում ավելացել
 են «Հանքահումքային արտադրանք», «Պատրաստի սննդի և
 գյուղատնտեսական արտադրանք», «Ոչ թանկարժեք մետաղներ
 և դրանցից պատրաստված իրեր», «Թանկարժեք և կիսաթան-

ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի և եվրոյի
 նկատմամբ




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

ՀՀ ներմուծումն ըստ ապրանքախմբերի
 (մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


ՀՀ արտահանումն ըստ ապրանքախմբերի
 (մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

⁴ Տվյալները ներկայացված են ըստ ԱՎԾ վճարային հաշվեկշռի:
⁵ Ըստ ԿԲ գնահատումների:
⁶ Արտահանման իրական աճը, ըստ ԿԲ գնահատումների, կազմել է 18.2%:

Հայաստանի արտաքին առևտրի բաշխվածությունը ըստ երկրների (31.12.2011թ. դրությամբ)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

կարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ծավալները:


Ներմուծման համեմատությամբ արտահանման առաջանցիկ աճի արդյունքում, առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճը մեծ չի եղել՝ 4.2% և տարվա կտրվածքով կազմել է 2822.0 մլն ԱՄՆ դոլար:

Ներմուծման և արտահանման աշխարհագրական կառուցվածքում պահպանվել են խոշոր կենտրոնացումները, ՀՀ հիմնական գործընկեր երկրների կազմը գրեթե չի փոխվել: Արտահանման կառուցվածքում մոտ 4 տոկոսային կետով աճել է ԱՊՀ անդամ երկրների կշիռը, և նույնքան նվազել է Եվրոպական տնտեսական միության երկրների կշիռը, իսկ մնացած գործընկերների կշիռներում փոփոխություններն աննշան են եղել: Արտահանումը շարունակում է կենտրոնացված մնալ և՛ ըստ երկրների, և՛ ըստ ապրանքատեսակների, ինչի պարագայում մեծանում է հանքագործական և սննդի ճյուղերի խոցելիությունը կոնկրետ երկրում կամ գլոբալ տնտեսությունում հավանական ցնցումներից:

Ներմուծման կտրվածքով հիմնական գործընկեր երկրներ են շարունակում մնալ Եվրոպական տնտեսական միության և ԱՊՀ երկրները, որոնց միասնական կշիռը, փոքր-ինչ աճելով, կազմել է 46.8%:


2.3. ԶՈՒՏ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՏՐԱՆՍԿԵՐՏՆԵՐ

Զուտ մասնավոր տրանսֆերտներ և աշխատողների եկամուտներ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ԱԿԾ:

Բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային զուտ փոխանցումներ



Հայաստանի տնտեսության շարունակական ինտեգրումը համաշխարհային շուկաներին մեծացրել է ՀՀ տնտեսության կախվածությունը միջազգային տնտեսական զարգացումներից՝ առավել խոցելի դարձնելով արտաքին տնտեսական ցնցումներից: ՀՀ տնտեսության վրա դրանց ազդեցության հիմնական ուղիներից են համարվում ֆիզիկական անձանց դրամական փոխանցումները, որոնց տեսակարար կշիռը ՀՆԱ-ում բարձր է: Ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների գերակշիռ մասը ստացվում է Ռուսաստանի Դաշնությունից, որտեղ, համաձայն ՌԴ Տնտեսական զարգացման նախարարության տվյալների, 2011 թ. տնտեսական աճը կազմել է 4.3%: Դիտարկվող ժամանակահատվածում առավել բարձր աճ է գրանցվել ՌԴ շինարարության և մանրածախ առևտրի ոլորտներում՝ համապատասխանաբար 5.1% և 7.2%, ինչով պայմանավորված՝ տարվա ընթացքում ավելացել են Հայաստան ներհոսող զուտ մասնավոր տրանսֆերտների և սեզոնային աշխատողների եկամուտները: Այսպես, մասնավոր տրանսֆերտների զուտ ներհոսքն ավելացել է 18.0%-ով, իսկ սեզոնային արտագնա աշխատողների եկամուտների զուտ ներհոսքի աճը կազմել է 36.5%:

2011 թ. արձանագրվել է նաև բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից իրականացվող ոչ առևտրային փոխանցումների զուտ ներհոսքի 19.6% աճ՝ նախորդ տարվա 15.4% աճի փոխարեն՝ կազմելով 1.3 մլրդ ԱՄՆ դոլար: Զուտ փոխանցումների հիմնական մասը՝ 90.0%-ը, ստացվել է ՌԴ-ից, իսկ 4.1%-ը՝ ԱՄՆ-ից:

2.4. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԱՐՏՔԻ ԲԵՌ⁷

2011 թ. արձանագրված տնտեսական աճը և ֆինանսական համակարգի նկատմամբ տնային տնտեսությունների պարտքի բեռի ցածր մակարդակը նպաստել են ֆինանսական կայունության ամրապնդմանը: Տնային տնտեսությունների վարկավորումը թեև ավելացել է, սակայն վերջինիս աճի տեմպը դեռևս զիջում է իր նախաճգնաժամային մակարդակին: Արդյունքում՝ Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների համեմատ, Հայաստանում տնային տնտեսությունների պարտքի բեռը շարունակում է մնալ անհամեմատ ցածր: Տնային տնտեսությունների վարկավորում/ՀՆԱ հարաբերակցությունը տ/տ ավելացել է 2.5 տոկոսային կետով և կազմել 14.5%: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկերը շարունակում են վարել զգուշավոր վարկային քաղաքականություն՝ կարելի է եզրակացնել, որ առավել վարկունակ տնային տնտեսությունների հետագա վարկավորումը, որը կզուգակցվի տնտեսական աճով, համակարգային խնդիրներ չի կարող առաջացնել:


Տնային տնտեսությունների պարտքի բեռի կառուցվածքում շարունակում են գերակշռող մնալ առևտրային բանկերի նկատմամբ պարտավորությունները, որոնց մասնաբաժինը տարեվերջին կազմել է 87.2%: Բանկերի համեմատ, ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների կողմից տնային տնտեսությունների վարկավորման աճը ավելի բարձր է եղել: Այսպես, 2011թ. բանկերի կողմից տնային տնտեսությունների վարկավորման աճը կազմել է 31.7%, իսկ վարկային կազմակերպությունների և գրավատների կողմից վարկավորման աճը, համապատասխանաբար՝ 36.6% և 48.8%:

Տնային տնտեսությունների վարկավորման ոլորտում ակտիվություն նկատվել է առավելապես սպառողական վարկերի գծով, որոնց աճը 2011թ. կազմել է 36.0%, ընդ որում՝ վերոնշյալ ցուցանիշը բանկերում կազմել է 35.3%, վարկային կազմակերպություններում՝ 55.3%: Սպառողական վարկավորման աճին նպաստել է բոլոր վարկատեսակների գծով արձանագրված աճը՝ բացառությամբ ավտովարկավորման, որը տարվա ընթացքում նվազել է 23.2%-ով:

Դիտարկվող ժամանակահատվածում հիփոթեքային վարկավորումն ավելացել է 19.3%-ով. բանկերի համար այն կազմել է 19.0%, իսկ վարկային կազմակերպությունների համար՝ 22.2%: Դիտարկվող ժամանակահատվածում կատարվել են նաև գրավադրման գործընթացի հետ կապված որոշ օրենսդրական բարեփոխումներ: Հիփոթեքային վարկավորման առաջարկի խթանման տեսանկյունից կարևոր դերակատարություն կարող է ունենալ Ազգային հիփոթեքային ընկերության կողմից պարտատոմսերի թողարկումը, որի շնորհիվ կընդլայնվեն ընկերության միջոցներ ներգրավելու և դրանք հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորմանը առավել մատչելի պայմաններով ուղղելու հնարավորությունները: Տարվա ընթացքում բանկային մրցակցության ուժեղացման պարագայում նվազել են վարկավորման տոկոսադրույքները: 2010 թ. դեկտեմբերի համեմատ, 2011 թ. դեկտեմբերին սպառողական և հիփոթեքային վարկերի միջին կշռված տոկոսադրույքները համապատասխանաբար նվազել են 0.7 և 0.9 տոկոսային կետերով:


⁷ Այստեղ տնային տնտեսությունների պարտքի բեռն իրենց ներկայացնում է վարկային հաստատությունների հանդեպ տնային տնտեսությունների պարտավորությունների հանրագումարը:

Բնակչության պարտքի բեռի ցուցանիշները (%)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Բնակչության ֆինանսական պարտավորությունների կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների սպառողական վարկային պորտֆելի կառուցվածքը



1. Բարտային վարկեր, 2. Ոսկու գրավով վարկեր, 3. Ավտովարկեր, 4. Կենցաղային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման վարկեր, 5. Այլ սպառողական վարկեր


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Բանկերի և վարկային կազմակերպությունների հիփոթեքային վարկերի պորտֆելը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի միջին կշռված տոկոսադրույքները




Միջին ամսական աշխատավարձ



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

Ապագա պայմանների ինդեքսը և դրա բաղադրատարրերը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

2011 թ. տնային տնտեսությունների հետ կապված վարկային ռիսկը ևս նվազել է: 2010 թ. համեմատ, բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված սպառողական և հիփոթեքային վարկերում չաշխատող վարկերի կշիռը համապատասխանաբար նվազել է 0.5 և 0.4 տոկոսային կետերով՝ կազմելով 3.3% և 4.2%: Միաժամանակ, հետհաշվեկշիռ դուրս գրված սպառողական վարկերի ծավալը նվազել է 0.6 տոկոսային կետով և կազմել 4.1%, մինչդեռ հետհաշվեկշիռ դուրս գրված հիփոթեքային վարկերի ծավալն աճել է 0.8 տոկոսային կետով և կազմել 4.8%:

2011 թ. արձանագրվել է տնային տնտեսությունների ավանդների առաջանցիկ աճ՝ 37.2%՝ ի հաշիվ հիմնականում ժամկետային ավանդների, որոնց աճը դիտարկվող ժամանակահատվածում կազմել է 41.5%: Ժամկետային ավանդներում շարունակում են գերակշռող մնալ արտարժույթային ավանդները, սակայն 2011թ. դրամային ժամկետային ավանդների մասնաբաժինը 2010թ. տարեվերջի համեմատ աճել է 2.9 տոկոսային կետով:

2011 թ. տնտեսական աճը ուղեկցվել է գործազրկության նվազմամբ և անվանական աշխատավարձերի որոշակի աճով: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2010 թ. համեմատ, 2011թ. գործազրկությունը նվազել է 0.8 տոկոսային կետով և կազմել 6.2%: Ավելացել է միջին ամսական անվանական աշխատավարձը. նախորդ տարվա համեմատ տարեկան միջին աճը կազմել է 6.2%, իսկ 2010 թ. տարեվերջի համեմատ՝ 7.3%: Ընդ որում՝ աշխատավարձերի աճ գրանցվել է ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածներում: Մասնավոր հատվածում անվանական աշխատավարձերի աճի վրա էական ազդեցություն են ունեցել արդյունաբերության և ծառայությունների ճյուղերում նկատվող արտադրողականության աճը, աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճը, ինչպես նաև նախորդ տարվա ընթացքում արձանագրված գների աճը: Բնակչության ընդհանուր եկամուտների աճի վրա որոշակի դրական ազդեցություն է ունեցել զուտ մասնավոր տրանսֆերտների և գործոնային եկամուտների աճը: Մյուս կողմից, սակայն, ՀՀ ԿԲ կողմից կատարված տնային տնտեսությունների եռամսյակային հարցումները ցույց են տվել, որ տնտեսական զարգացումների հետ կապված՝ բնակչությունը ցուցաբերում է առավել զգուշավոր մոտեցում: Այսպես, 2011թ. չորրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ապագա պայմանների ինդեքսը նվազել է 10.7%-ով՝ պայմանավորված բոլոր ենթահինդեքսների նվազմամբ⁸:

2.5. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԵՐ

Ֆինանսական կայունության տեսանկյունից մշտապես դիտարկվում են անշարժ գույքի գների փոփոխությունները և դրանց հնարավոր ազդեցությունը ֆինանսական համակարգի վարկային պորտֆելի որակի վրա:

2011 թ., նախորդ տարվա համեմատ, Երևանում բազմաբնակարան շենքերի բնակարանների դրամային գները նվազել են

⁸ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ կողմից 2011 թ. չորրորդ եռամսյակում անցկացված տնային տնտեսությունների եռամսյակային հարցում:

5.5%-ով⁹, սակայն չորրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի նկատմամբ, արձանագրվել է գների փոքր աճ՝ 0.04%-ով: Այնուհանդերձ, դիտարկվող աճը փխրուն է և վառ ընդգծված միտում չունի: 2011թ. չորրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, բնակարանների շուկայական միջին գների մակարդակը նվազել է 2.6%-ով: Արձանագրված նվազումը, սակայն, չի կարող առաջացնել համակարգային խնդիրներ վարկերի ապահովվածության տեսանկյունից, քանի որ ՀՀ առևտրային բանկերը շարունակում են կիրառել վարկառուների վարկունակության գնահատման բավականին խիստ մոտեցում, տրամադրում են հիփոթեքային վարկեր անշարժ գույքի շուկայական արժեքի 60-80 %-ից ոչ ավելի (մանրամասն տես «Առևտրային բանկերի շուկայական ռիսկ» ենթաբաժնում):

Դիտարկվող ժամանակահատվածում անշարժ գույքի առաջարկը ևս նվազել է, սակայն դա բավարար չի եղել գների նվազումը զսպելու համար: Այսպես, 2011 թ. ընթացքում շահագործման հանձնված բնակելի շենքերի ծավալը, նախորդ տարվա համեմատ, նվազել է 0.8%-ով՝ պայմանավորված պետական բյուջեի և բնակչության միջոցներով իրականացված շինարարության նվազմամբ: Բնակելի շենքերի գործարկման ավելացում դիտարկվել է կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության մասով: Արդյունքում՝ կազմակերպությունների միջոցներով ֆինանսավորման տեսակարար կշիռն աճել է 41.4 տոկոսային կետով և կազմել 69.0%: Բնակելի շենքերի գործարկման ծավալների ընդլայնմանը կարող է նպաստել տարվա ընթացքում բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարության վարկավորման ծավալների աճը:

Բնակելի շենքերի գործարկումն ըստ ֆինանսավորման աղբյուրների


Ֆինանսավորման աղբյուրներ	2011 թ. գործարկված բնակելի շենքեր (քառ. մ)	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ	Տոկոսային փոփոխությունը 2010 թ. համեմատությամբ
Ընդամենը, այդ թվում՝	492651	100%	-0.8%
պետական բյուջե	28859	5.9	-77.6%
կազմակերպությունների միջոցներ	340016	69.0	148.1%
բնակչության միջոցներ	123776	25.1	-46%

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

2011 թ., անշարժ գույքի գների նվազմանը զուգընթաց, ավելացել է անշարժ գույքի հետ կապված գործառնությունների քանակը (10.2%-ով): Դիտարկվող ժամանակահատվածում աճել է նաև անշարժ գույքի առուվաճառքի քանակը (22.5%), որի մասնաբաժինը ընդհանուր գործառնությունների քանակում աճել է


⁹ ՀՀ-ում անշարժ գույքի միասնական միջին գների ինդեքսի բացակայության պատճառով, որպես անշարժ գույքի գնային զարգացումների չափորոշիչ է ընտրվել երևան քաղաքի բնակարանների միջին գների ինդեքսը: Մինչև 2005թ. հունիս անշարժ գույքի գնանշումն իրականացվել է ԱՄՆ դոլարով, ինչի պատճառով անշարժ գույքի դրամային գները հաշվարկվել են՝ հիմք ընդունելով ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար փոխարժեքը:

Բնակարանների միջին գների ինդեքսը երևանում (1 քառ. մ)




Աղբյուրը՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

Շինարարության վարկերի ծավալը, աճը և դրանցում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Անշարժ գույքի գործառնությունների քանակի ինդեքսը



Աղբյուրը՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

Առուվաճառքի և հիփոթեքային վարկերի քանակի մարզային բաշխվածությունը 2011թ. ընթացքում



Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

2.4 տոկոսային կետով և կազմել 23.7%: Անշարժ գույքի առուվաճառքի քանակում մեծ է բազմաբնակարան շենքերի բնակարանների (35.9%) և հողերի առուվաճառքի (37.9%) մասնաբաժինը: Բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքները հիմնականում կենտրոնացած են Երևանում, որին բաժին է ընկել առուվաճառքի գործարքների քանակի 68.7%-ը՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցելով 0.4 տոկոսային կետով: Հարկ է նշել, որ բնակարանների առուվաճառքի ցուցանիշի վրա ազդում է նաև մարդկանց շարժունակությունը, երբ մարդիկ ձգտում են փոխել բնակության վայրը, ինչը, սակայն, Հայաստանին բնորոշ չէ:

ՀՀ տարածքում տրված հիփոթեքային վարկերի քանակն ու առուվաճառքի գործարքների քանակը հիմնականում ունեցել են գրեթե համանման մարզային բաշխվածություն: Այսպես. հիփոթեքային վարկերի 63.2%-ն է տրամադրվել Երևանում: Այնուամենայնիվ, Ազգային հիփոթեքային ընկերության կողմից տրամադրված վարկերի մարզային բաշխվածության աշխարհագրական անհամաչափությունը շատ ավելի մեղմ է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Դեռևս նախորդ տարի սկսված տնտեսական վերականգնումը շարունակվել է նաև 2011թ.՝ պայմանավորվելով ինչպես արտաքին, այնպես էլ ներքին զարգացումներով: Արդյունաբերական նշանակության ապրանքատեսակների գների, մասնավոր տրանսֆերտների ներհոսքի, գյուղատնտեսության ճյուղում արձանագրված աճը և վարկավորման աճի բարձր մակարդակը պայմանավորել են տնտեսական ակտիվության վերականգնումը:

Մասնավոր տրանսֆերտների, գործունային եկամտի և անվանական աշխատավարձերի աճը դրական են ազդել բնակչության իրական եկամուտների, հետևաբար և՛ վարկունակության վրա: Տնտեսության ճյուղերի և արտահանման աճը իրենց հերթին բարձրացրել են իրավաբանական անձանց վարկունակությունը՝ ամրապնդելով ֆինանսական կայունությունը:

Ներքին և արտաքին գնային զարգացումները և ԿԲ իրականացրած դրամավարկային քաղաքականությունը հնարավորություն են տվել զնաճը տարեվերջին պահպանելու թիրախային միջակայքում, ինչը դրական է անդրադարձել նաև տնտեսավարող սուբյեկտների վարկունակության վրա:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1. ԴՐԱՄԱԿԱՆ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՆԵՐ

2011 թվականին ՀՀ ֆինանսական շուկայում հիմնականում դիտարկվել է տոկոսադրույքների աճ: Բացառություն է կազմել վարկային շուկան, որտեղ տարվա ընթացքում տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքները նվազել են մոտ մեկ տոկոսային կետով: 2010 թվականից փոխանցված բարձր գնաճային սպասումները և գնաճի երկրորդային ազդեցությունները տարեսկզբից ԿԲ դրամավարկային պայմանների աստիճանական խստացման քաղաքականության պատճառ դարձան, և ԿԲ-ն, փետրվարից սկսած, երեք ամիս շարունակ, ընդհանուր առմամբ 1.25 տոկոսային կետով բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Երրորդ եռամսյակի վերջին արդեն գնաճային ռիսկերի հավասարակշռումը և լավատեսական հեռանկարը հնարավորություն տվեցին մեղմացնելու դրամավարկային պայմանները, և քաղաքականության գործիքի տոկոսադրույքը նվազեցվեց 0.5 տոկոսային կետով՝ մինչև տարեվերջ պահպանվելով կայուն՝ 8.0% մակարդակի վրա:

Միջբանկային փողի շուկայում, որը դրամական շուկայի ամենամեծ հատվածն է, 2011 թվականին արձանագրվել են զգալի ակտիվացման միտումներ: Այսպես, տարվա ընթացքում միջբանկային ռեպո և ԿԲ ռեպո շուկաներում միջին ամսական շրջանառությունները համապատասխանաբար կազմել են 29.6 մլրդ դրամ և 32.3 մլրդ դրամ: Նշված շուկաներում բարձրացել են նաև տոկոսադրույքները: 2011 թվականի վերջին շուկայական ռեպո տոկոսադրույքը կազմել է 11.2%՝ 2010 թվականի վերջի 7.8%-ի փոխարեն:


2011 թվականի դեկտեմբերին շարունակվել է նաև ապադուլարայնացման շրջանակներում պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխության հերթական փուլը, որը ենթադրում է ներգրավված արտարժույթային միջոցների դիմաց անբողջությամբ դրամով պահուստավորում¹⁰:

Նշված փոփոխությունների շրջանակներում տարվա ընթացքում էապես նվազել է նաև ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի դրամային ավելցուկային իրացվելիությունը: Պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխությունը նպաստել է նաև կարճատև դրամային տոկոսադրույքների բարձրացմանը:

Ինչպես ցույց է տալիս եկամտաբերության կորերի ուսումնասիրությունը, երկրորդային շուկայում եկամտաբերության էական աճ նկատվել է միայն կարճաժամկետ հատվածում, իսկ մյուս ժամկետայնությամբ պարտատոմսերի տոկոսադրույքները գրեթե չեն փոխվել: Ընդհանուր առմամբ, դիրքի էական տեղաշարժեր չեն նկատվել: Անցյալ նվազել է կորի թեքությունը՝ 0.32-ից՝ 0.27, ինչը վկայում է կարճաժամկետ և երկարաժամկետ տոկոսադրույքների միջև տարբերության նվազման մասին:


¹⁰ 2011 թվականի առաջին եռամսյակից բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորումը 75%-ի չափով իրականացվում էր ՀՀ դրամով, իսկ 25%-ի չափով՝ արտարժույթով:

Ռեպո գործառնությունների ծավալները և տոկոսադրույքների մակարդակները




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Վարկային ռեսուրսների հարթակում իրականացված գործարքների ծավալը և միջին կշռված տոկոսադրույքը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

ԿԲ-ում առևտրային բանկերի՝ ՀՀ դրամով թրթակցային հաշիվների և ՀՀ դրամով պահուստավորման ենթակա միջոցների հարաբերակցությունը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Պետական գանձապետական կարծաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման ծավալները և միջին կշռված եկամտաբերությունները



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առք ու վաճառքի գործառնությունները



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

2011 թվականի վերջի դրությամբ առկա պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը՝ դյուրացիան, կազմել է 1015 օր՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ ավելանալով 160 օրով:

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման նպատակով (D_M) հաշվարկված մոդիֆիկացված դյուրացիայի միջին ցուցանիշը 2011 թվականի վերջի դրությամբ շրջանառությունում առկա պետական պարտատոմսերի համար կազմել է 2.4 միավոր՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ աճելով 0.3-ով:

31.12.11 թ. դրությամբ շրջանառությունում գտնվող պետական պարտատոմսերի մոդիֆիկացված դյուրացիայի ցուցանիշը տարբեր ժամկետային խմբերի համար

D_M	մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-2 տարի	2-5 տարի	5-7 տարի
	0.25	0.66	1.23	2.74	5.29

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

31.12.11 թ. դրությամբ առևտրային բանկերի՝ առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի պետական պարտատոմսերի պորտֆելի մոդիֆիկացված դյուրացիայի ցուցանիշը և եկամտաբերության 1% փոփոխության դեպքում հավանական շահույթ/վնասի մեծությունը տարբեր ժամկետային խմբերի համար

Ցուցանիշ	մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-2 տարի	2-5 տարի	5-7 տարի	Ընդամենը
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի նպատակով ձեռք բերված ՊԿ ծավալ (մլրդ ՀՀ դրամ)	18504.3	3138.0	15829.5	45109.3	11665.7	94246.8
Տեսակարար կշիռը ընդհանուր պորտֆելում	19.6%	3.3%	16.8%	47.9%	12.4%	100%
D_M	0.25	0.65	1.26	2.66	5.21	2.2
Գնի փոփոխություն +/- (մլրդ ՀՀ դրամ)	46.4	19.4	205.3	1188.7	500.7	1960.5

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Եկամտաբերության 1% աճի պարագայում առևտրային բանկերի պետական արժեթղթերի պորտֆելի վնասները կարող են կազմել մոտ 2.0 մլրդ դրամ (առևտրային բանկերի նորմատիվային կապիտալի մոտ 0.6%-ը), ընդ որում՝ գերակշիռ մասը սպասվում է միջնաժամկետ պարտատոմսերից՝ պայմանավորված պարտատոմսերի ընդհանուր ծավալում վերջիններիս մեծ տեսակարար կշռով:

2011 թվականի ընթացքում պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների եկամտաբերությունների միջին քառակուսային շեղումը նախորդ տարվա համեմատ աճել է 0.26 կետով և կազմել է 2.50: Շուկայական ռեպո տոկոսադրույքների միջին քառակուսային շեղումը նվազել է 0.75 կետով և կազմել է 1.19:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց¹¹ կողմից արժեթղթերի շուկայում իրականացված գործառնությունները (ներառյալ ռեպո գործառնությունները՝ առանց ՀՀ ԿԲ հետ գործարքների) նախորդ տարվա համեմատ ավելացել են 32%-ով և կազմել 2 տրլն 328 մլրդ դրամ: Արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները կազմել են վերոնշյալ շրջանառության 16%-ը՝ նախորդ տարվա համեմատ մնալով գրեթե անփոփոխ: Արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների գերակշիռ մասը՝ 93.3%-ը, կազմել են պետական արժեթղթերով գործարքները, կորպորատիվ պարտատոմսերով և բաժնային արժեթղթերով գործարքները համապատասխանաբար կազմել են 1.1%-ը և 5.6%-ը:

2011 թվականի ընթացքում ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության¹² մակարդակի տատանողականությունը շարունակել է նվազել. պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության ցուցանիշի ստանդարտ շեղումը կազմել է 3.0՝ նախորդ տարվա 5.6-ի փոխարեն:

Պետական արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն միջին ժամկետայնության պետական պարտատոմսերով իրականացված առուվաճառքի գործառնությունները, որոնց կշիռն ընդհանուր շրջանառությունում կազմել է 44.6%, իսկ կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերով իրականացված առուվաճառքի գործառնությունների կշիռները համապատասխանաբար կազմել են 20.7% և 34.8%:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված ռեպո գործառնությունները (առանց ՀՀ ԿԲ հետ գործառնությունների) տարվա ընթացքում ավելացել են 32%-ով և կազմել 1 տրլն 949 մլրդ դրամ, ընդ որում՝ ռեպո գործառնությունների գերակշիռ մասը՝ 98.6%-ը, դարձյալ պետական արժեթղթերով իրականացված գործարքներն են: Կորպորատիվ պարտատոմսերով կնքված ռեպո գործարքները կազմել են վերոնշյալ շրջանառության 1.2%-ը, բաժնետոմսերով կնքված ռեպո գործարքները՝ 0.2%-ը:

2011 թվականին կարգավորվող շուկայում արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունների ընդհանուր շրջանառությունը կազմել է 17.7 մլրդ դրամ, ընդ որում՝ 64.5%-ը կազմել են ռեպո գործառնությունները:


2011 թվականի ընթացքում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների կառուցվածքում միայն կարգավորվող շուկայում իրականացված առուվաճառքի գործառնությունների տեսակարար կշիռը դեռևս փոքր է և կազմում է 1.7%:

Կարգավորվող շուկայում գերակշռել են կորպորատիվ պարտատոմսերով իրականացված գործառնությունները՝ կազմելով բորսայական շրջանառության 67.6%-ը: Պետական պարտատոմսերով և բաժնային արժեթղթերով իրականացված առուվաճառքի գործառնությունները համապատասխանաբար կազմել են 30.4% և 2.0%:


¹¹ 31.12.2011 թ. դրությամբ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք 21 առևտրային բանկերն ու 8 ներդրումային ընկերություններն են:

¹² Պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիությունը հաշվարկվում է որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում ամսվա ընթացքում իրականացված առուվաճառքի գործառնությունների և շրջանառությունում առկա պետական պարտատոմսերի ծավալների հարաբերակցություն:


ՊՊ առուվաճառքի գործառնությունների և ՊՊ գործառնությունների ծավալ/շրջանառությունում առկա ՊՊ ծավալ հարաբերակցությունը



Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված ռեպո գործառնությունները՝ ըստ գործարքի հիմքում ընկած արժեթղթերի տեսակների (առանց ՀՀ ԿԲ հետ գործարքների)



Արժեթղթերի կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առջ ու վաճառքի գործառնությունները




2011 թվականին արժեթղթերի շուկայի համախառն շրջանառություն/ՅՆԱ¹³ ցուցանիշը կազմել է 9.9%՝ նախորդ տարվա 8.2%-ի փոխարեն:

ՀՀ արժեթղթերի շուկայի կապիտալացում/ՅՆԱ¹⁴ ցուցանիշը տարեվերջին կազմել է 1.4%՝ 2010 թվականի համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է կապիտալացման նկատմամբ ՅՆԱ-ի առաջանցիկ աճով: 31.12.2011 թվականի դրությամբ կարգավորվող շուկայում առուվաճառքի թույլատրված 14 հաշվետու թողարկողներից առաջատարների կենտրոնացվածությունն ըստ կապիտալացման ունեցել է աճի միտում:

2008 - 2011 թթ. համար բաժնետոմսերի թողարկողներ առաջատար եռյակի և հնգյակի կենտրոնացվածությունն ըստ կապիտալացման մակարդակի

Ժամկետ	Առաջատար երեք ընկերությունների կապիտալացում (%)	Առաջատար հինգ ընկերությունների կապիտալացում (%)
31.12.2008	89.2	99.2
31.12.2009	83.7	98.2
31.12.2010	80.1	94.7
31.12.2011	83.8	96.6

ՀՀ արժույթային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները և փոխարժեքները



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

3.2. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ

ՀՀ ներքին արժույթային շուկան 2011 թվականի ընթացքում կարելի է բնութագրել որպես կայուն: 2011 թվականի վերջին, նախորդ տարվա վերջի համեմատ, ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 5.79%-ով՝ 363.44 դրամից հասնելով 385.77 դրամի: Վարիացիայի ցուցանիշը 2011 թվականին կազմել է 39.72՝ 2010 թվականի 160.9-ի դիմաց:

ԱՍՓՈՓՈՒՄ

2011 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսական շուկայում զարգացումները տարեսկզբից ուղղորդվել են ԿԲ դրամավարկային քաղաքականության խստացմամբ, այնուհետև՝ արտաքին աշխարհից եկող ռիսկերի հավասարակշռման և գնաճային ճնշումների մեղմման միջավայրում՝ քաղաքականության տոկոսադրույքի նվազման և չեզոք դրամավարկային քաղաքականության պահպանմամբ: Ընդհանուր առմամբ, ֆինանսական շուկայի գրեթե բոլոր հատվածներում (բացառությամբ վարկային շուկայի) դիտարկվել է տոկոսադրույքների աճ: Պայմանավորված տնտեսական աճի վերականգնմամբ և վարկերի պահանջարկի աճով՝ բավականին աշխույժ է եղել նաև ֆինանսական շուկայի գերակշիռ մասը կազմող միջբանկային շուկան և, այդպիսով, նպաստել է իրացվելիության արդյունավետ բաշխման մեխանիզմների կայացմանը:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացվող արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնություններում գերակշռել են պետական պարտատոմսերով գոր-

¹³ Ներդրումային ծառայություն մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի համախառն ծավալի հարաբերությունը ՅՆԱ-ին:
¹⁴ Ցուցակված բաժնետոմսերի շուկայական գնի հարաբերությունը ՅՆԱ-ին:

ծարքները, մինչդեռ կարգավորվող շուկայում՝ կորպորատիվ պարտատոմսերով գործարքները: Բաժնետոմսերի շուկայում, չնայած նախորդ տարվա նկատմամբ արձանագրված աճին, առավաճառքի ծավալը դեռևս շարունակում է մնալ փոքր, որի մասին վկայում են այլ երկրների համեմատ շուկայի կապիտալացման և շրջանառության փոքր ծավալները:


Քանի որ միջազգային շուկաներին ՀՀ ֆինանսական շուկայի միասնացման աստիճանը դեռևս ցածր մակարդակի վրա է, ապա համաշխարհային տնտեսության, հատկապես Եվրոգոտու ֆինանսական և հարկաբյուջետային հիմնախնդիրների զարգացման անորոշություններով պայմանավորված՝ ֆինանսական շուկաներից բխող հնարավոր ռիսկերը ուղղակիորեն չեն անդրադարձել ՀՀ ներքին շուկայի կայունության վրա:

Ներքին արժույթային շուկայում իրավիճակը նույնպես գնահատվել է կայուն, և նախորդ տարվա համեմատ դիտարկվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկում:

Այսպիսով, ամփոփելով 2011 թվականը, կարելի է ասել, որ իրադարձությունների զարգացումը շուկայի տարբեր հատվածներում բնութագրվել է ցածր տատանողականությամբ և արտաքին բացասական ազդեցությունների բացակայությամբ:

4. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքն ըստ ֆինանսական հաստատությունների



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Հայաստանի բանկային համակարգին¹⁵ բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 91.1%-ը, ուստի Հայաստանի ֆինանսական կայունության գնահատման տեսանկյունից առավելապես կարևորվում են բանկային համակարգի գործունեության ռիսկայնության բացահայտումն ու գնահատումը: Ապահովագրական, արժեթղթերի շուկաների մասնակիցների, ինչպես նաև ֆինանսական համակարգի մյուս հաստատությունների մասնաբաժինը բանկային համակարգի համեմատ բավականին փոքր է, և Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության վրա դրանց գործունեության ազդեցությունը մեծ չէ:

2011 թ. բանկերը բարձր ակտիվություն են ցուցաբերել վարկային շուկայում՝ պայմանավորված հետձգնաժամային ժամանակահատվածում տնտեսության իրական հատվածի աստիճանական վերականգնմամբ և տրանսֆերտների աճով: Բանկերի ակտիվ վարկավորմանը նպաստել են նաև բանկերի կողմից իրավաբանական անձանց վարկավորման խթանմանն ուղղված քայլերը, ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի կտրուկ տատանումների բացակայությունը և Կառավարության «Գյուղատնտեսության վարկավորման սուբսիդավորման ծրագրի» մեկնարկը: Հաշվետու տարում ևս պահպանվել է ֆիզիկական անձանց նկատմամբ իրավաբանական անձանց վարկավորման առաջանցիկ աճի միտումը:

Տարվա ընթացքում բանկերը շարունակել են նաև ընդլայնել մասնաճյուղերի ցանցը, հաճախորդների շրջանակը և բարելավել մատուցվող ծառայությունների որակը՝ նպաստելով բանկային ծառայությունների հասանելիության մեծացմանն ու բանկային մշակույթի զարգացմանը:


4.1. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐ

Բանկային համակարգի կայունության քարտեզը

Բանկային համակարգի կայունության վարքագծի վերաբերյալ պատկերացում է տալիս կայունության քարտեզը¹⁶, որն արտացոլում է, թե ինչպես են նախորդ ժամանակաշրջանի համեմատ փոփոխվել համակարգին բնորոշ ռիսկերը բնութագրող ցուցանիշները:

2011 թ. ընթացքում բանկային կայունության քարտեզի բաղադրիչները 2010 թ. համեմատ առանձնապես մեծ փոփոխության չեն ենթարկվել: Դրական տեղաշարժ են ունեցել ակտիվների որակի և տոկոսադրույթի ռիսկի ցուցանիշները: Եկամտաբերության և արտարժույթային ռիսկի ցուցանիշները մնացել են

Բանկային համակարգի կայունության քարտեզը. 2011 թ. միջինը 2010 թ. միջինի համեմատ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

¹⁵ ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերը:

¹⁶ Բանկային համակարգի կայունության քարտեզում օգտագործվել են կապիտալի համարժեքությունը, ակտիվների որակը, իրացվելիությունը, եկամտաբերությունը, տոկոսադրույթի ռիսկը և արտարժույթային ռիսկը բնութագրող ցուցանիշները: Ցուցանիշները քարտեզում օգտագործելուց առաջ նորմավորվել են 1-10 չափողականությամբ, հաշվարկվել են ԱՄՆ մեթոդաբանությանը համապատասխան: Արժեքների մոտեցումը քարտեզի կենտրոնին վկայում է ռիսկի նվազեցման, իսկ կենտրոնից հեռացումը՝ ռիսկի աճի մասին: Բանկային համակարգի կայունության քարտեզը չի կարող մեկնաբանվել որպես ֆինանսական կայունության մակարդակի արտացոլում, այն ընդամենը պատկերացում է տալիս ներառված ռիսկերի մակարդակի փոփոխության վերաբերյալ՝ աճել է, թե՞ նվազել:

գրեթե անփոփոխ, մինչդեռ բանկերի կողմից վարկավորման աճի պարագայում որոշակիորեն նվազել են իրացվելիության և կապիտալի համարժեքության ցուցանիշները:

4.1.1. Ֆինանսական միջնորդություն, կենտրոնացվածություն

2011 թ. ընթացքում, անվանական ՀՆԱ աճին զուգընթաց, տնտեսությունում արձանագրվել է բանկային համակարգի ակտիվների առաջանցիկ աճ, ինչի արդյունքում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ հարաբերակցությունը աճել է 9.6 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 54.1%: ՀՆԱ աճի նկատմամբ վարկերի առաջանցիկ աճի արդյունքում բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ հարաբերակցությունը ավելացել է 6.3 տոկոսային կետով և կազմել 31.6%:

Բանկային համակարգի կողմից ներգրավված ավանդների և ՀՆԱ հարաբերակցությունը աճել է 5.3 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 24.5%: Տարվա ընթացքում 3.5 տոկոսային կետով աճել է նաև փողի զանգվածի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշը և տարեվերջին կազմել 29.5%:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ տարածքում գործող բանկերի փաստացի կանոնադրական կապիտալն ավելացել է 34.7 մլրդ դրամով: Տարեսկզբի համեմատ բանկային համակարգի կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների փայամասնակցության տեսակարար կշիռը նվազել է 3.8 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 75.1%:

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 11.6%-ով (37.0 մլրդ դրամով), իսկ ընդհանուր ակտիվները՝ 32.4%-ով (506.3 մլրդ դրամով): Արդյունքում՝ կապիտալ/ակտիվներ հարաբերակցության ցուցանիշը (լևերիջի ցուցանիշ) նվազել է 3.2 տոկոսային կետով և կազմել 17.2%:

Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից

Ցուցանիշներ	31.12.08	31.12.09	31.12.10	31.12.11
Ընդհանուր ակտիվներ	0.07	0.07	0.07	0.07
Ընդհանուր պարտավորություններ	0.07	0.07	0.07	0.07
Ընդհանուր կապիտալ	0.06	0.06	0.06	0.06


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ըստ Հերֆինդալ-Հիրշմանի՝ տարբեր անփոփ բնութագրիչների (ակտիվներ, պարտավորություններ, կապիտալ, վարկեր, ավանդներ) գործակիցների¹⁷ համակարգի կենտրոնացվածությունը պահպանվել է ցածր մակարդակի վրա, ինչը սահմանափակում է ֆինանսական կայունության վրա կենտրոնացվածության ռիսկի ազդեցության հավանականությունը:

Հայաստանում գործող 21 առևտրային բանկերից 4 խոշորագույն բանկերի ակտիվների, պարտավորությունների և կապիտալի մասնաբաժինները համակարգում նվազել են համապատասխանաբար 0.2, 0.3 և 1.5 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 37.7%, 38.0% և 38.3%:


¹⁷ Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցն ընդունում է արժեքներ 0-1 միջակայքում և բնութագրում կենտրոնացվածությունը (0-ին մոտ արժեքները նշանակում են կենտրոնացվածության ցածր աստիճան):

Ֆինանսական միջնորդության մակարդակը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


Օտարերկրյա ներդրողների մասնակցությունը ՀՀ բանկային համակարգի կապիտալում



4 խոշորագույն բանկերի ակտիվների, պարտավորությունների և կապիտալի տեսակարար կշիռները ընդհանուր բանկային համակարգում




Վարկային ներդրումների տարեկան աճը



Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները


մլրդ ՀՀ դրամ



— Կարկեր տնտեսությանը (ձախ առանցք)
 — Կարկերի տես. կշիռը ընդհանուր ակտիվներում (աջ առանցք)
 — Տնտեսության վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցություն (աջ առանցք)
 — Արտարժույթային վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում (աջ առանցք)

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում (ըստ ԱՄՅ մեթոդաբանության)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

4.1.2. Վարկային ռիսկ

2011 թ. ընթացքում տնտեսությանը տրամադրված վարկերն ավելացել են 36.2 %-ով (2010 թ.՝ 26.3% աճ): Չնայած հաշվետու տարում բանկային համակարգի վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշի զգալի աճին՝ ֆինանսական միջնորդության (վարկեր/ՀՆԱ ցուցանիշ) ներկայիս մակարդակի պայմաններում դեռևս կան մեծաթիվ պոտենցիալ վարկառուներ: Այս համատեքստում, տնտեսական աճի և բնակչության եկամուտների շարունակական աճի, վարկավորման ընթացակարգերի հետագա դյուրինացման պարագայում կարող է դիտարկվել վարկավորման ընդլայնում և ֆինանսական միջնորդության խորացում:

2011 թ. բանկային համակարգի վարկերի աճի տեմպը 3.8 տոկոսային կետով գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, ինչի արդյունքում ընդհանուր ակտիվներում վարկերի տեսակարար կշիռը ավելացել է 1.6 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 58.6%:

Տարեսկզբի համեմատ՝ չաշխատող վարկերի (հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի ռիսկային դաս ունեցող վարկեր) տեսակարար կշիռը ընդհանուր վարկային պորտֆելում աճել է 0.3 տոկոսային կետով և կազմել 3.4%: Վարկային ներդրումների ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է հանրային սննդին և սպասարկման այլ ոլորտներին, գյուղատնտեսությանը և առևտրին տրամադրված վարկերում, համապատասխանաբար՝ 5.2%, 4.7 % և 4.2%:

Չաշխատող վարկերի (ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դաս ունեցող վարկեր) տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում՝ հաշվարկված ԱՄՅ մեթոդաբանության համաձայն, փոքրինչ նվազել է՝ տարեվերջին կազմելով 5.3 %, որը ԱՊՅ և Արևելյան Եվրոպայի որոշ երկրների բանկային համակարգերի նույն ցուցանիշների համեմատ բավականին ցածր է:

Չաշխատող տարում ևս պահպանվել է իրավաբանական անձանց վարկավորման առաջնայնության միտումը, ինչի արդյունքում իրավաբանական անձանց տրված վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում տարեսկզբի համեմատ աճել է 1.4 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 60.0% (դեռևս 2009թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում բանկերը վերաիմաստավորեցին վարկային քաղաքականությունը՝ առաջնայնությունը տալով տնտեսական աճի ապահովմանը նպաստող՝ իրավաբանական անձանց վարկավորմանը):

Տարեսկզբի համեմատ վարկային ներդրումներն¹⁸ ավելացել են 33.0%-ով և տարեվերջին կազմել 1 տրլն 362 մլրդ դրամ, ընդ որում՝ վարկավորման աճ գրանցվել է տնտեսության բոլոր ճյուղերում: Առավել բարձր աճի տեմպ արձանագրվել է հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտների, տրանսպորտի ու կապի և առևտրի ճյուղերին տրամադրված վարկային ներդրումներում՝ համապատասխանաբար 65.7%, 60.0% և 49.2%: Վարկային պորտֆելում մեծ տեսակարար կշիռ ունեն առևտրի, արդյունաբերության և հիփոթեքային վարկերը՝ համապատասխանաբար 21.3%, 20.8% և 8.5%:

¹⁸ Վարկային ներդրումների ծավալը տարբերվում է տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալից, քանի որ ներկայացված է նաև ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկերի, ավանդների, լիզինգի, ֆակտորինգի և ռեպոյի չափով:

Ըստ տնտեսության ճյուղերի՝ վարկային ներդրումների Հեր-ֆինդալ-Հիրշմանի ինդեքսը մնացել է անփոփոխ և տարեվերջին կազմել 0.11՝ վկայելով վարկային ներդրումների բաշխվածության չափավոր կենտրոնացվածության մասին: Այնուամենայնիվ, նույն ցուցանիշի մեծությունը՝ ըստ բանկերի միջինի, կազմել է 0.17՝ վկայելով որոշ բանկերում վարկավորման ճյուղային կենտրոնացվածության համեմատաբար բարձր մակարդակի մասին:

Հաշվետու տարում 0.3 տոկոսային կետով ավելացել է ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումների և ակտիվների հարաբերակցության ցուցանիշը՝ տարեվերջին կազմելով 0.9%:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-թեստերի¹⁹ արդյունքները ցույց են տալիս, որ բանկային համակարգի հնարավոր կորստի մեծությունը տարեսկզբին իրականացված նույն սթրես-թեստերի արդյունքների համեմատ փոքր-ինչ աճել է, ինչը հիմնականում պայմանավորված է նորմատիվային ընդհանուր կապիտալի նկատմամբ վարկային պորտֆելի առաջանցիկ աճի տեմպով:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ²⁰

31.12.2011 թ.	Դիտարկվող սթրեսային սցենարներ		
	Միաժամանակ հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի վարկերի 25%-ի դասակարգում անհուսալի վարկերի	Կասկածելի դասի վարկերի 75%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Ստանդարտ դասի վարկերի 30%-ի դասակարգում հսկվող դասի վարկերի
Բանկային համակարգի վնասի մեծությունը	8.2 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 2.4%-ը	3.0 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.9%-ը	37.6 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 11.1%-ը
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի հանդես գալու դեպքում	17.9%	18.1%	16.6%


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Դիտարկվող վատագույն սցենարներում, երբ բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվը կազմում է 16.6%, որոշ բանկերում արձանագրվում է կապիտալի համարժեքության նորմատիվի խախտում: Այնուամենայնիվ, վերջիններիս կապիտալի համարժեքության նորմատիվի ցուցանիշները գտնվում են նվազագույն սահմանաչափին մոտ, և հնարավոր վնասները նշանակալի բացասական ազդեցություն չեն կարող բողոքել ՀՀ ֆինանսական համակարգի կայունության վրա:

¹⁹ Սթրես-սցենարները կառուցված են բանկերի վարկերի անփոփոխ ծավալների և գրավադրված գույքի անտեսման ենթադրությունների պայմաններում (ըստ որոնց՝ վարկերն անհուսալի դասակարգվելու սցենարում վարկերի դիմաց գրավադրված անշարժ գույքի օտարման հնարավորությունը չի դիտարկվում):


²⁰ Հաշվետվությունում ներկայացված այս և հաջորդ սթրես-սցենարները չեն կանխատեսում այս կամ այն ռիսկերի դրսևորումը, այլ նպատակ ունեն բացահայտելու ֆինանսական համակարգի թույլ կողմերը, գնահատելու վերջինիս կողմից ռիսկերը չեզոքացնելու ունակությունը:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռները ընդհանուր վարկերում




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդն ըստ տնտեսության ճյուղերի



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


Վարկերի կորուստների դիմանիլ աճի դեպքում կապիտալի համարժեքության նորմատիվը խախտող բանկերի թիվը



Վարկային պորտֆելի կորուստը

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը 31.12.2011թ. դրությամբ



1. Վարկային ռիսկ,
2. Տոկոսատրույքի ռիսկ,
3. Գործառնական ռիսկ,
4. Արտարժույթային ռիսկ,
5. Կապիտալի գործիքների զնային ռիսկ:


Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

ԳԳ բանկային համակարգի իրացվելիության նորմատիվների փաստացի և նորմատիվային մեծությունների շարժը



Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

Բանկային համակարգի ակտիվների հարաբերությունը պարտավորությունների՝ ըստ մարմանը մնացած ժամկետայնությունների



Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենար

31.12.2011թ.	Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների 50%-ի կատարում
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը	18.1%

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների²¹ կատարումից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես - թեստի արդյունքներով՝ որևէ բանկ չի խախտում կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջը, ըստ որի՝ հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների կատարումից բխող վարկային ռիսկը գտնվում է կառավարելի շրջանակներում:

4.1.3. Իրացվելիության ռիսկ

2011 թ. բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի արագընթաց աճի պայմաններում դրսևորվել է իրացվելիության նվազման միտում: Այնուամենայնիվ, տարվա ընթացքում իրացվելիության մակարդակը գտնվել է սահմանված նորմատիվային նվազագույն սահմանաչափերից գրեթե կրկնակի բարձր մակարդակում: Տարեսկզբի համեմատ՝ բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության նորմատիվը նվազել է 1.6 տոկոսային կետով, իսկ ընթացիկ իրացվելիության նորմատիվը՝ 10.7 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով համապատասխանաբար 27.9% և 120.8%²²:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետային խմբերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարման ժամկետայնությունների որոշ ժամկետային խմբերում ակտիվների և պարտավորությունների հարաբերակցությունները էականորեն տարբերվում են. մինչև 180 օր (ներառյալ՝ ցպահանջ) մարման ժամկետայնության խմբում ակտիվների և պարտավորությունների հարաբերակցությունը կազմում է 95%, 180-365 օր ժամկետային խմբում՝ 73 %, 1 - 3 տարի ժամկետային խմբում՝ 187%, իսկ 3 տարի և ավելի ժամկետային խմբում՝ 167%: Քանի որ ակտիվների և պարտավորությունների բացասական ճեղքվածք առկա է միայն 180-365 օր ժամկետային խմբում, ապա բանկային համակարգը բավականին երկար ժամանակ ունի՝ ճշգրտելու վերոնշյալ ժամկետային խմբում ակտիվների և պարտավորությունների առկա ճեղքվածքը:

Առևտրային բանկերի արտաքին վարկային պարտավորություններն ավելացել են 62.7%-ով և կազմել 295.7 մլրդ դրամ: Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցներն ավելացել են 2 անգամ՝ կազմելով ընդհանուր արտաքին վարկային պարտավորությունների 37.4 %-ը:

Առևտրային բանկերի հիմնական վարկատու երկրներն են՝ Ռուսաստանը՝ 15.7 %, Լյուքսեմբուրգը՝ 11.9 %, Գերմանիան՝ 7.2%, Նիդեռլանդները՝ 5.8%, Ֆրանսիան՝ 4.9%: Երկարաժամ-

²¹ Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները ներառում են վարկային գծերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների չօգտագործված մասը, ակրեդիտիվները, տրամադրված երաշխիքները և երաշխավորությունները:

²² Ընդհանուր իրացվելիության նորմատիվը հաշվարկվում է որպես բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերություն, ընթացիկ իրացվելիության նորմատիվը՝ բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերություն, պահանջվող նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 15% և 60%:

կետ պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 86.8%, ինչը գրեթե բացառում է այդ պարտավորությունների վերաֆինանսավորման հետ կապված ռիսկերը: Բանկային համակարգի պարտավորությունների կենտրոնացումների տեսանկյունից՝ ռիսկերի փոքր-ինչ նվազում է գրանցվել. տարեսկզբի համեմատ՝ ընդհանուր պարտավորություններում խոշոր պարտավորությունների²³ տեսակարար կշիռը նվազել է 0.4 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 27.2%:

Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

31.12.2011 թ.	Դիտարկվող սթրեսային սցենարներ		
	Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի մարում	Ցպահանջ միջոցների 25%-ի մարում	Ցպահանջ միջոցների 25%-ի և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի մարում
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ	23.6%	23.5%	18.6%
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ	96.0%	127.3%	94.7%

Աղբյուրը՝ ԳԳ 4Բ:

Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-թեստերի արդյունքները իրացվելիության ռիսկի խնդիր չեն առաջացնում: Դիտարկվող սթրես-թեստերում դիտարկվող վատթարագույն շուկային իրավիճակներում որոշ բանկերում արձանագրվում են ընդհանուր իրացվելիության և ընթացիկ իրացվելիության նորմատիվների խախտումներ, սակայն, ֆինանսական համակարգի կայունության տեսանկյունից, իրացվելիության խնդիրների ի հայտ գալու հավանականությունը շարունակում է մնալ փոքր:


Չետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար

31.12.2011թ.	Չետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների 50%-ի կատարում
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ ընդհանուր ակտիվներ	23.1%
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ	103.9%

Չետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների կատարումից բխող իրացվելիության ռիսկի գնահատման սթրես - թեստի արդյունքները ցույց են տալիս, որ դիտարկվող սցենարում բանկային համակարգի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվների մեծությունները շարունակում են մնալ նվազագույն սահմանաչափերից բարձր:


²³ Այն բոլոր միջոցների հանրագումարը, որոնք առանձին վերցրած գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը՝ առանց հաշվի առնելու փոխկապվածությունը:

Բանկային համակարգի խոշոր պարտավորությունների հարաբերությունը ընդհանուր պարտավորություններին



Աղբյուրը՝ ԳԳ 4Բ:

Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի դեպքում իրացվելիության նորմատիվները խախտող բանկերի թիվը




Ավանդների նվազում

4.1.4. Շուկայական ռիսկ

Արտարժույթային ռիսկ

Բանկային համակարգի՝ արտարժույթի առջ ու վաճառքից և վերագնահատումից ստացված զուտ եկամուտները



Աղբյուրը՝ 33 ԿԲ:

2011 թ. ընթացքում ՀՀ դրամի՝ այլ արժույթների նկատմամբ փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգն արտարժույթի վերագնահատման արդյունքում ունեցել է 52 մլն դրամ օգուտ, ընդ որում՝ արտարժույթի վերագնահատման արդյունքում վնաս է ունեցել 13 բանկ, իսկ եկամուտ՝ 8 բանկ: Բանկային համակարգը արտարժույթի առուվաճառքի գործառնություններից ապահովել է 13.7 մլրդ դրամ եկամուտ:

Տարեկազմի համեմատ՝ արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում աճել է 4.2 տոկոսային կետով, իսկ արտարժույթային ավանդների տեսակարար կշիռը նվազել է 0.9 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով համապատասխանաբար 62.7% և 68.7%: Տարեվերջին բանկերի արտարժույթային 1-ին խմբի զուտ դիրքը (ածանցյալ գործիքները ներառյալ) կազմել է բացասական 4.3 մլրդ դրամ (նորմատիվային ընդհանուր կապիտալի 1.3 %-ը):

Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ²⁴

31.12.2011 թ.	Դիտարկվող սթրեսային սցենարներ		
	ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 1%-ով արժևորման (արժեզրկման) դեպքում օգուտ (վնաս)	Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 1%-ով արժևորման (արժեզրկման) դեպքում օգուտ (վնաս)	Հնարավոր առավելագույն տասնօրյա կմսայն գնահատված VaR մոդելով
Բանկային համակարգի օգուտը/վնասը՝ արտարժույթի վերագնահատման արդյունքում	41.6 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.01%-ը (-41.6 մլն դրամ)	0.9 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.0003%-ը (-0.9 մլն դրամ)	-163.9 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.05%-ը

Աղբյուրը՝ 33 ԿԲ:

Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-թեստում դիտարկվող հնարավոր վատագույն սթրես-սցենարների դրսևորման դեպքում գնահատվել է, որ արտարժույթային ռիսկից բանկերի կորուստները նշանակալի չեն, և ֆինանսական կայունության խոցելիության վրա դրանց ազդեցությունը թույլ է:

Տոկոսադրույթի ռիսկ

Հաշվետու տարում նվազել են ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով տրամադրվող վարկերի տոկոսադրույթները: Հատկապես ցայտուն է եղել արտարժույթային վարկերի տոկոսադրույթների նվազումը՝ պայմանավորված բանկերի՝ արտարժույթային վարկերի նկատմամբ պահանջարկի խթանման ցանկությանը, քանի որ պարտավորություններում գերակշռել են արտարժույթային միջոցները: Դրամային և արտարժույթային վարկերի տոկոսադրույթների նվազմանը էականորեն նպաստել է նաև հա-

²⁴ Դիտարկվող սթրես-սցենարներով և VaR մոդելով (վերջինս չի համարվում սթրես-սցենար, քանի որ VaR-ի հաշվարկում հաշվի են առնվում արտարժույթների փոխարժեքների պատմական շարքերը) գնահատված կորուստների հաշվարկման հիմքում ընկած են 31.12.2011թ. դրությամբ բանկերի արտարժույթային դիրքերը:


մենատարբար խոշոր բանկերի միջև մրցակցության խորացումը՝ հանգեցնելով տոկոսադրույքների սպրեդի նվազմանը:

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

31.12.2011 թ.	Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով աճի (նվազման) ազդեցությունը կապիտալի տնտեսական արժեքի վրա՝ գնահատված «ոլորացիայի մեթոդով»	Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով աճի (նվազման) դեպքում առաջիկա երեք ամսվա զուտ տոկոսային եկամտի՝ սպասվող եկամտից շեղում՝ գնահատված «տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի մեթոդով»
Բանկային համակարգի օգուտ/վնաս	2.6 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.8%-ը (-2.6 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.8%-ը)	-94.5 մլն դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.03%-ը (94.5 մլն դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.03%-ը)

Աղբյուրը՝ ԴԴ 4Բ:

Բանկային համակարգի ավանդների և վարկերի միջին տոկոսադրույքները



Աղբյուրը՝ ԴԴ 4Բ:

Բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքի միջին կշռված ժամկետայնության (ոլորացիա) ճեղքվածքը գրեթե փակ է և տատանվում է կես տարվա շրջանակում, ինչը բնութագրում է, որ 2012 թվականին շուկայական տոկոսադրույքների հնարավոր տատանումները բանկային համակարգին մեծ վնասներ չեն պատճառի:

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման սթրես-թեստերի հնարավոր վատագույն սցենարների դրսևորման դեպքում բանկերի կորուստները համակարգի կապիտալի նկատմամբ նշանակալի չեն և ֆինանսական կայունության տեսանկյունից՝ ոչ խոցելի:


Գնային ռիսկ

Հաշվետու տարում ևս բանկային համակարգի գնային ռիսկը գնահատվել է բավականին ցածր: Տարեսկզբի համեմատ, բանկային համակարգի՝ առևտրային նպատակներով պահվող և վաճառքի համար նատչելի ֆինանսական ակտիվների կշիռն ընդհանուր ակտիվներում նվազել է 1.7 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 6.2%: Առևտրային նպատակներով պահվող և վաճառքի համար նատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից բանկային համակարգն ունեցել է 856 մլն դրամի կապիտալի նվազում (կամ կապիտալի 0.3%-ը):

Անշարժ գույքի գների տատանումներով պայմանավորված ռիսկերը պահպանվել են կառավարելի շրջանակում: Հայաստանյան բանկերը շարունակել են հիփոթեքային վարկեր տրամադրել անշարժ գույքի շուկայական արժեքի 60-80 %-ից ոչ ավելի (Loan to Value ratio), կիրառել են վարկառուների վարկունակության գնահատման բավականին խիստ մոտեցում: Բանկերի կողմից ընդունված այս սահմանափակումները էականորեն զսպում են անշարժ գույքի գների անկումից հնարավոր վարկային կորուստների ռիսկը:

Անշարժ գույքի 30% արժեզրկման սթրես-սցենարի դրսևորման դեպքում բանկերի հնարավոր առավելագույն կորուստները (գնային և վարկային ռիսկերի տեսանկյունից) աճի միտում ունեն, սակայն անշարժ գույքի գների տատանողականությունը մեծ չէ:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը




Անշարժ գույքի գների փոփոխության սթրես-սցենարներ


Անշարժ գույքի 30% արժեզրկման սցենար	31.12.2011թ.
Բանկային համակարգի վնասը պայմանավորված բանկի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերագնահատմամբ (գնային ռիսկ)	8.4 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 2.6%-ը)
Բանկային համակարգի վնասը պայմանավորված սթրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի ²⁵ 30%-ի չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի՝ արժեզրկված գնով իրացումը) (վարկային ռիսկ)	4.1 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 1.2%-ը)
Բանկային համակարգի վնասը պայմանավորված սթրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի 100%-ով չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի՝ արժեզրկված գնով իրացումը) (վարկային ռիսկ)	13.9 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 4.1%-ը)

Աղբյուրը՝ ԳԴ ԿԲ:


Ընդհանուր կապիտալի համարժեքությունն ըստ բանկերի (31.12.2011 թ. դրությամբ)



Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշներ



Բանկային համակարգի ROA-ն Արևելյան Եվրոպայի և ԱՊՅ երկրներում



Աղբյուրը՝ ԱՄՀ:

4.1.5. Կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն

ՀՀ բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը և շահութաբերությունը, Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների համեմատությամբ, բավականին բարձր են, որը բանկային համակարգին հնարավորություն է ընձեռնում ռիսկերը չեզոքացնելու սեփական միջոցների հաշվին: Ակտիվ վարկային քաղաքականության արդյունքում 2011 թ. ընթացքում ևս բանկերի՝ ռիսկով կշռված ակտիվների աճի տեմպը գերազանցել է նորմատիվային ընդհանուր կապիտալի աճի տեմպը, ինչի արդյունքում բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը տարեսկզբի համեմատ նվազել է 4.0 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 18.3 % (պահանջվող նվազագույնը՝ 12%):

Տարվա ընթացքում 4 բանկ համալրել է կանոնադրական կապիտալը 34.7 մլրդ դրամ ընդհանուր զումարով: Բանկերը շարունակել են պահպանել կապիտալացվածության բարձր մակարդակ, և կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջի խախտում որևէ բանկում չի արձանագրվել:

Ի հաշիվ արտարժույթային փոխարժեքի կտրուկ տատանումների բացակայության և ակտիվ վարկային քաղաքականության՝ բանկերին հաջողվել է ապահովել բավարար շահութաբերություն:

Նախորդ տարվա համեմատ, 2011թ. ընթացքում բանկային համակարգի զուտ շահույթը՝ հաշվարկված Կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան,²⁶ աճել է 9.9%-ով և կազմել 33.2 մլրդ դրամ, ընդ որում՝ շահույթով են աշխատել 19 բանկ, վնասով՝ 2 բանկ: Բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) կազմել է 1.8 %, ըստ կապիտալի (ROE)՝ 9.8 %:

Նախորդ տարվա համեմատ հաշվետու տարում բանկային համակարգի համախառն եկամուտներն ավելացել են 22.0%-ով և կազմել 292.3 մլրդ դրամ, իսկ համախառն ծախսերը՝ 24.3%-ով տարեվերջին կազմելով 249.4 մլրդ դրամ:

²⁵ խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարի մեծությունն է, որոնց մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի 30% արժեզրկված արժեքները:

²⁶ Տարբերվում է ՖՀՄԱ-ից հիմնականում ստանդարտ ակտիվների գծով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումների մասով:

Ընդհանուր առմամբ, նախորդ տարվա համեմատ հաշվետու տարում բանկերի եկամուտների և ծախսերի կառուցվածքում մեծացել են տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի տեսակարար կշիռները և նվազել ոչ տոկոսային եկամուտների, ոչ տոկոսային ծախսերի և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված հատկացումների և վերադարձների տեսակարար կշիռները:

Հաշվետու տարում բանկային համակարգի շահույթը՝ հաշվարկված ըստ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ), կազմել է 43.1 մլրդ դրամ, և այս դեպքում շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) կազմել է 2.3%, շահութաբերությունն ըստ կապիտալի (ROE)՝ 12.7%:

4.2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ֆինանսական համակարգի երկրորդ խոշոր հատվածը վարկային կազմակերպություններն են, որոնց ակտիվները կազմում են ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 4.8%-ը: Դիտարկվող ժամանակահատվածում վարկային կազմակերպություններն ապահովել են ակտիվների, պարտավորությունների և կապիտալի աճ:

**Վարկային կազմակերպությունների ակտիվների,
պարտավորությունների, կապիտալի և շահույթի մեծությունները
(հազար ՀՀ դրամ)**

Ցուցանիշ	31.12.2010	31.12.2011	Աճ (%)
Ակտիվներ	87204906	123850974	42.0
Պարտավորություններ	51232047	77006457	50.3
Կապիտալ	35972742	46844518	30.2
Զուտ շահույթ	4308688	4930540	14.4


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Բանկային համակարգի համեմատ՝ վարկային կազմակերպությունների կապիտալացումը և շահութաբերությունն ավելի բարձր են և, ըստ տարբեր սթրես-սցենարների, վարկային կազմակերպությունները լիովին ունակ են չեզոքացնելու հնարավոր ռիսկերը: Տարվա ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 3.4 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 37.8 %:

2011 թ. շահույթով աշխատել է 30 վարկային կազմակերպություն, վնասով՝ 2 կազմակերպություն: Վարկային կազմակերպությունների՝ ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական հաշվետվությունների հիման վրա հաշվարկված շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) և շահութաբերությունն ըստ կապիտալի (ROE) համապատասխանաբար կազմել են 6.8% և 17.5%:


Վարկային կազմակերպությունների շահույթը, հաշվարկված ըստ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), 2011 թ. կազմել է 7.1 մլրդ դրամ, և այս դեպքում շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) կազմել է 6.8 %, շահութաբերությունն ըստ կապիտալի (ROE)՝ 17.5 %:

Բանկային համակարգի ROE-ն Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում




Աղբյուրը՝ ԱՄՀ:

Բանկային համակարգի եկամուտները և ծախսերը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդն ըստ տնտեսության ճյուղերի



Հաշվետու տարում վարկային կազմակերպությունների չափատող վարկերի (հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասի վարկեր) տեսակարար կշիռը նվազել է 0.4 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 2.6%: Վարկերի ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ չափատող վարկերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է տրանսպորտի և կապի, հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներին տրամադրված ու հիփոթեքային վարկերում, համապատասխանաբար՝ 13.1%, 11.0 % և 6.4 %:

Չափատող վարկերի կշիռը՝ հաշվարկված ԱՄՅ մեթոդաբանությամբ (ոչ ստանդարտ, կասկածելի, անհուսալի դասի վարկեր), տարեսկզբի համեմատ նվազել է 1.4 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 3.9 %՝ վկայելով վարկային պորտֆելի որակի բարելավման մասին:

Նախորդ տարվա համեմատ, հաշվետու տարում ակտիվների հնարավոր կորստի պահուստներին կատարված զուտ մասհանումների մեծության և ընդհանուր ակտիվների մեծության հարաբերակցությունը աճել է 0.5 տոկոսային կետով և կազմել 1.7%:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ²⁷

31.12.2011 թ.	Դիտարկվող սթրեսային սցենարներ		
	Միաժամանակ հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի վարկերի 25%-ի դասակարգում անհուսալի վարկերի	Կասկածելի դասի վարկերի 75%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Ստանդարտ դասի վարկերի 30%-ի դասակարգում հսկվող դասի վարկերի
Վարկային կազմակերպությունների ընդհանուր վնասի մեծությունը	282.2 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.7%-ը	78.5 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.2%-ը	3.0 մլրդ դրամ կամ նորմատիվային կապիտալի 5.3 %-ը

Իրացվելիության տեսանկյունից՝ ակտիվների և պարտավորությունների բոլոր ժամկետային զամբյուղներում (մինչև 180 օր /ներառյալ՝ ցպահանջ/, 180 օրից մինչև մեկ տարի, 1 տարուց ավելի) ակտիվների ծավալները գերազանցել են պարտավորությունների ծավալները՝ փաստելով, այլ հավասար պայմաններում, վարկային կազմակերպությունների իրացվելիության ցածր ռիսկի մասին:

4.3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2011 թվականի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցել են 9 ապահովագրական ընկերություններ²⁸:

Տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունների ակտիվներն ավելացել են 22.8%-ով և տարեվերջին կազմել 31.4

²⁷ Սթրես-սցենարները կառուցված են վարկային կազմակերպությունների վարկերի անփոփոխ ծավալների և գրավարված գույքի անտեսման վարկածով (ըստ որի՝ վարկերն անհուսալի դասակարգվելու սցենարում վարկերի դիմաց գրավարված անշարժ գույքի օտարման հնարավորությունը չի դիտարկվում):

²⁸ Քանի որ 2011 թվականի չորրորդ եռամսյակի համապատասխան հաշվետվությունները 1 ընկերություն չի ներկայացրել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, բերված տվյալները ամփոփում են 8 ապահովագրական ընկերությունների ցուցանիշները:

մլրդ դրամ, պարտավորություններն ավելացել են 33.4%-ով՝ կազմելով 17.5 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալն ավելացել է 11.6%-ով՝ կազմելով 14.0 մլրդ դրամ: 2011 թ. ընթացքում ՀՀ ֆինանսական համակարգում ապահովագրական ընկերությունների մասնաբաժինը նվազել է 0.1 տոկոսային կետով՝ 31.12.2011 թ. դրությամբ կազմելով ֆինանսական համակարգի ակտիվների 1.4%-ը: Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող հիմնական ցուցանիշը՝ հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը, 2011 թվականի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 2.7 անգամ և կազմել 22.4 մլրդ դրամ (նախորդ տարի նշված ցուցանիշի աճը կազմել էր 1.8%)՝ հիմնականում ի հաշիվ ԱՊՊԱ համակարգի ներդրման: Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող մյուս ցուցանիշը՝ ապահովագրավճարներ / ՀՆԱ հարաբերակցությունը, 2011 թվականի դեկտեմբերին կազմել է 0.59%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով ավելի քան երկու անգամ²⁹: Ինչ վերաբերում է բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ապահովագրավճարներին, ապա այս ցուցանիշը 2011 թվականի դեկտեմբերին կազմել է 6834 դրամ³⁰ նախորդ տարվա 2532 դրամի փոխարեն:

Թեև ԱՊՊԱ համակարգի ներդրման արդյունքում մեծացել է ապահովագրական շուկայի ակտիվության մակարդակը, սակայն ընդհանուր ապահովագրական շուկայի կշիռը ֆինանսական համակարգում շարունակում է մնալ փոքր: Ապահովագրական ընկերությունների ռիսկերը վերահսկելի շրջանակներում են (նորմատիվային ցուցանիշները բարձր են): Գնահատումների համաձայն՝ ֆինանսական կայունության վրա ապահովագրական ընկերությունների ազդեցության հավանականությունը շատ փոքր է:

Նշված հանգամանքները վկայում են ապահովագրական ընկերությունների գործունեության ցածր ռիսկայնության մասին.

- 2011 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունների վնասաբերության ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է և կազմել 56.4%³¹, վկայելով ապահովագրական համակարգի տեխնիկական արդյունավետության աճի մասին: Ապահովագրական ընկերությունների վնասաբերության ցուցանիշի աճը զուգակցվել է ծախսատարության ցուցանիշի նվազման հետ, որը 2011 թվականի վերջի դրությամբ կազմել է 36.1%³², վկայելով ապահովագրական համակարգի գործառնական արդյունավետության աճի մասին:
- Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության նվազագույն սահմանաչափի 54.1%-ը կազմել է վճարունակության պահանջվող մեծության կշիռը, ռիսկով կշռված


²⁹ 2010թ. տվյալներով՝ զարգացած արդյունաբերական երկրներում ոչ կյանքի ապահովագրության գծով ապահովագրավճարներ/ՀՆԱ ցուցանիշը միջինում կազմել է 3.57%, զարգացող երկրներում՝ 1.32% (աղբյուրը՝ Swiss Re, Sigma No 2/2011, May 2011):

³⁰ 2010թ. տվյալներով՝ զարգացած արդյունաբերական երկրներում մեկ շնչին բաժին է ընկնում միջինում 529896 դրամ կամ 1458 ԱՄՆ դոլար ապահովագրավճար, զարգացող երկրներում՝ 17627 դրամ կամ 49 ԱՄՆ դոլար ապահովագրավճար (աղբյուրը՝ Swiss Re, Sigma No 2/2011, May 2011):

³¹ Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ (զուտ հաշվեգրված հատուցումներ + զուտ հատկացումներ տեխնիկական պահուստներին /բացառությամբ ՉԱԴ/ + այլ գործառնական ծախսեր ապահովագրության գծով) / (վաստակված ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով վերադարձվող գումարներ):

³² Ծախսատարության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ ոչ տոկոսային ծախսեր / (վաստակված ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով վերադարձվող գումարներ):


Ապահովագրական համակարգի ակտիվների կառուցվածքը 31.12.2011թ. դրությամբ



1. Ավանդներ բանկերում, 2. Ռեպր համաձայնագրով վաճառված արժեթղթեր, 3. Պետական և ոչ պետական արժեթղթեր, 4. Ստացվելիք գումարներ ապահովադիրներից՝ ուղղակի ապահովագրության գծով, 5. Հատուցումների գծով պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ, 6. Հիմնական միջոցներ, 7. Բանկային հաշիվներ, 8. Տրամադրված փոխառություններ, 9. Վերաապահովագրողների մասնաբաժինն ապահովագրական պահուստներում, 10. Այլ ակտիվներ


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

ՀՀ ապահովագրական համակարգի հիմնական բնութագրիչները




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ապահովագրավճարներ / ՀՆԱ հարաբերակցությունը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում (2010թ.)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Swiss Re, Sigma No 2/2011 և Xprimm.com:

Ապահովագրական համակարգի վնասաբերության և ծախսատարության ցուցանիշները



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության կառուցվածքը 31.12.2011թ. դրությամբ



1. ՎՊՄ (վճարունակության պահանջվող մեծություն),
2. Վարկային ռիսկ,
3. Արտարժույթային ռիսկ,
4. Գործառնական ռիսկ:

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

ակտիվների կշիռը՝ 45.9%, իսկ կապիտալի համարժեքության նորմատիվը 31.12.2011թ. դրությամբ կազմել է 191.1%՝ մոտ երկու անգամ գերազանցելով նվազագույն սահմանաչափը:

Գնահատվել է, որ ստորև դիտարկվող հնարավոր սթրես-սցենարների դրսևորման դեպքում ապահովագրական ընկերությունների վճարունակության մակարդակը զգալի փոփոխությունների չի ենթարկվի, և ապահովագրական համակարգի՝ ֆինանսական կայունության տեսանկյունից ռիսկերի առաջացման հավանականությունը շատ փոքր է:

Վճարունակության գնահատման սթրես-սցենար

31.12.2011 թ.	Դիտարկվող սթրեսային սցենար
	Հատուցումների հաճախականության աճ՝ 20% և գների աճ՝ 5%
Ապահովագրական համակարգի չվաստակած ապահովագրավճարների պահուստի (ՀԱԳ-ի) անհրաժեշտ աճ սթրես-սցենարի հանդես գալու դեպքում	653.2 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 4.6%-ը
Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի հանդես գալու դեպքում	182.4%

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Դիտարկվող հնարավոր սթրես-սցենարների (հատուցումների հաճախականության աճ՝ 20% և հատուցվող գումարների աճ՝ 5%) դրսևորման դեպքում գնահատվել է ապահովագրական ընկերությունների վճարունակության մակարդակի փոփոխությունը: Սթրես-սցենարի դրսևորման դեպքում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը որևէ ապահովագրական ընկերություն չի խախտի:

Ապահովագրական համակարգի միջոցների տեղաբաշխումը ցածր ռիսկային ակտիվներում հնարավորություն է տալիս ներդրումային ռիսկը պահպանելու ցածր մակարդակի վրա: Տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվները հիմնականում տեղաբաշխված են բանկային ժամկետային և ցապահանջ ավանդներում, ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերում:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

31.12.2011 թ.	Դիտարկվող սթրեսային սցենարներ		
	Ստանդարտ դասի ակտիվների 30%-ի դասակարգում հսկվող դասի	Ստանդարտ դասի ակտիվների 10%-ի դասակարգում անհուսալի դասի	ՆՉՊՊ շրկային աճ 50%
Ապահովագրական համակարգի վնասի մեծությունը	566.8 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 4.0%-ը	2.1 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 14.5%-ը	1.1 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 7.6%-ը
Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի հանդես գալու դեպքում	189.2%	173.1%	176.6%

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-թեստերի արդյունքները ցույց են տալիս, որ ապահովագրական համակարգի հնարավոր կորստի մեծությունը ցածր է:

Արտարժուքային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ³³

31.12.2011 թ.	Դիտարկվող սթրեսային սցենարներ		
	ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 1%-ով արժեզրկման (արժևորման) դեպքում օգուտ (վնաս)	Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 1%-ով արժեզրկման (արժևորման) դեպքում օգուտ (վնաս)	Հնարավոր առավելագույն տասնօրյա վնասը՝ գնահատված VaR մոդելով
Ապահովագրական համակարգի օգուտը / վնասը արտարժույթի վերագնահատման դեպքում	62.6 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.4 %-ը (-62.6 մլն)	5.5 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.04%-ը (5.5 մլն)	94.6 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.7 %-ը

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Արտարժուքային ռիսկի գնահատման սթրես-թեստում դիտարկվող հնարավոր վատագույն սթրես-սցենարների դրսևորման դեպքում գնահատվել է, որ արտարժուքային ռիսկից ապահովագրական ընկերությունների կորուստները նշանակալի չեն:

Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար

31.12.2011 թ.	Դիտարկվող սթրեսային սցենար
	ՆԶՊՊ շուկային աճ 50%
Ապահովագրական համակարգի ՆԶՊՊ-ի անհրաժեշտ աճ սթրես-սցենարի հանդես գալու դեպքում	1.1 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 7.6%-ը
Ապահովագրական համակարգի իրացվելիությունը սթրես-սցենարի հանդես գալու դեպքում	176.6%

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ապահովագրական համակարգի իրացվելիության ռիսկի մակարդակը ցածր է, ինչի մասին վկայում է նաև այն հանգամանքը, որ 2011 թվականի ընթացքում իրացվելիության նորմատիվի խախտում չի արձանագրվել:


4.4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել է ներդրումային ծառայություն մատուցող 21 բանկ և 8 ներդրումային ընկերություն:

2011 թվականին, նախորդ տարվա համեմատ, ներդրումային ընկերությունների ակտիվներն ավելացել են 11.6%-ով՝ կազմելով 21.8 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալը՝ 1.1%-ով՝ կազմելով 3.2 մլրդ դրամ: 31.12.2011թ. դրությամբ ներդրումային ընկերությունների ընդհանուր շահույթը կազմել է 580 մլն դրամ, ընդ որում՝ շահույթ են ապահովել ընկերություններից 6-ը, իսկ 2 ընկերություններ տարին ավարտել են վնասով:

2011 թվականի վերջի դրությամբ ներդրումային ընկերությունների վարկային ռիսկը կազմել է ռիսկով կշռված ակտիվների 62%-ը, շուկայական ռիսկը՝ 36%-ը, իսկ գործառնական ռիսկը՝ 2%-ը: Ներդրումային ընկերությունների շուկայական ռիսկի կառուցվածքում գերակշռել է տոկոսադրույթի ռիսկը՝ կազմելով

Ներդրումային ընկերությունների կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը 31.12.2011թ. դրությամբ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

³³ Դիտարկվող սթրես-սցենարներով և VaR մոդելով (վերջինս չի համարվում սթրես-սցենար, քանի որ VaR-ի հաշվարկում հաշվի են առնվում արտարժույթների փոխարժեքների պատմական շարքերը) գնահատված կորուստների հաշվարկման հիմքում ընկած են 31.12.2011թ. դրությամբ ապահովագրական ընկերությունների արտարժուքային դիրքերը:

70%-ը, արտարժութային և բաժնային արժեթղթերի գնային ռիսկերը համապատասխանաբար կազմել են 28%-ը և 2%-ը:

2011 թվականի վերջի դրությամբ կարգավորվող շուկայում առուվաճառքի թույլատրված են եղել 14 թողարկողների 17 արժեթղթեր, ընդ որում՝ թողարկողներից 4-ը ֆինանսական կազմակերպություններ են, որոնց բաժին է ընկել թողարկված բաժնային արժեթղթերի 24%-ը: Բաժնետոմսերի ընդհանուր ծավալը 52.9 մլրդ դրամ է, իսկ պարտատոմսերինը՝ 3.5 մլրդ դրամ: Թողարկողներից մեկը հաշվետու է ինչպես բաժնետոմսերի, այնպես էլ՝ պարտատոմսերի գծով:

Տարվա վերջի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում գրանցված՝ անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողները 1614 ընկերություններ են, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերը՝ 92478 մարդ: ՀՀ արժեթղթերի շուկայում, բացի ՀԿԴ-ից, արժեթղթեր թողարկողներին ռեեստրի վարման ծառայություն են մատուցել նաև ներդրումային ծառայություն մատուցող երկու անձինք, որոնք 2011 թվականի վերջի դրությամբ իրականացրել են 354 ընկերությունների և 29564 սեփականատեր անձանց ռեեստրի վարումը:

4.5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՅԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

ՀՀ ֆինանսական համակարգի այլ մասնակիցներ են համարվում ՀՀ տարածքում գործող 123 գրավատներ (առանց մասնաճյուղերի), արտարժույթի առուվաճառք իրականացնող 231 ընկերություններ (առանց մասնաճյուղերի), ապահովագրական բրոքերային 4 կազմակերպություններ, վճարահաշվարկային 10 ընկերություններ, արժութային 1 դիլեր: Դրանց գործունեության հնարավոր ազդեցությունը ֆինանսական կայունության վրա գնահատվում է շատ ցածր, քանի որ ֆինանսական համակարգի ակտիվներում ունեցած տեսակարար կշիռը անհամեմատ փոքր է:

ԱՍՓՈՓՈՒՄ

Ֆինանսական համակարգում շարունակել են գերակշիռ դիրքը պահպանել բանկային հաստատությունները, իսկ մյուս մասնակիցները ֆինանսական կայունության վրա էական ազդեցություն չունեն: Հաշվետու տարում ևս, մակրոտնտեսական դրական զարգացումներին զուգընթաց, շարունակվել է բանկերի կողմից՝ դեռևս նախորդ տարվա երկրորդ կեսից արձանագրված ակտիվ վարկավորումը:

Զնայած բանկերի վարկային ներդրումների աճի տեմպի արագացմանը, ինչը ազդել է կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշների նվազման վրա, այնուամենայնիվ, բանկային համակարգի իրացվելիության ցուցանիշների փաստացի մակարդակները գերազանցել են նվազագույն սահմանաչափերը գրեթե երկու անգամ:

Ընդհանուր առմամբ, դրական զարգացումների ներքո, ֆինանսական համակարգի ստանձնած ռիսկերը պահպանվել են կառավարելի շրջանակներում:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Կարևորելով վճարային համակարգերի նշանակությունը և ազդեցությունը դրամավարկային քաղաքականության և երկրի ֆինանսական կայունության վրա³⁴ Կենտրոնական բանկը շարունակում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել համակարգային նշանակություն ունեցող վճարային և արժեթղթերի հաշվարկային համակարգերին, դրանց գործունեությունն ապահովող հեռահաղորդակցման ցանցերին:

Միջբանկային հաշվարկները Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնականում կատարվում են Կենտրոնական բանկի համակարգերով³⁵: Հայաստանում իրականացվող միջբանկային վճարումների ծավալի 99%-ից ավելին իրականացվում է Կենտրոնական բանկի համակարգերով, որի մեծությունը նախորդ տարվա համեմատ փոքր-ինչ աճել է:

5.1. ՀՀ ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգ

2011 թ. ընթացքում Կենտրոնական բանկի համակարգերով համախառն վճարումների 39%-ը կատարվել է Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգով (ԷՎՀ): ԷՎՀ վճարումների տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ նվազել է 17 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է ԷՎՀ վճարումների ծավալի 5% նվազմամբ և թղթային եղանակով համախառն վճարումների համակարգով (այսուհետ՝ ԹՀՎՀ) իրականացվող՝ ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներով (հիմնականում՝ դրամական միջոցների ներգրավման և ռեպո) գործարքների վճարումների ծավալների աճով:

ԷՎՀ գործունեության մշտադիտարկման (մոնիթորինգ) շրջանակներում արձանագրված ցուցանիշները վկայում են, որ համակարգն անվտանգ է և կայունության տեսակետից հիմնախնդիրներ չի ստեղծում: Համակարգում ռիսկայնությունը դիտարկվում է ստորև ներկայացվող ուղղություններով:

Վարկային ռիսկ


Համակարգում հաշվարկային բանկի (Կենտրոնական բանկի) վարկային ռիսկը բացակայում է, քանի որ միջոցների անբավարարության դեպքում մասնակիցների վարկավորման մեխանիզմ չի գործում: Միևնույն ժամանակ, բացակայում է նաև ստացող կողմի վարկային ռիսկը, քանի որ վերջինս տեղեկանում է իրեն հասցեագրված վճարման մասին միայն վճարման վերջնական և անվերադարձելի դառնալուց հետո³⁶:

³⁴ Մանրամասն տես «Ֆինանսական կայունության հաշվետվություն» (2007 թ.) և «Վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը Հայաստանի Հանրապետությունում» (2010 թ.) հրապարակումները:

³⁵ ՀՀ ԿԲ համակարգերով վճարումները ներառում են՝ էլեկտրոնային վճարումների համակարգով առանց բորսայական գործառնությունների մեծության, և թղթային եղանակով համախառն վճարումների համակարգով վճարումները, ինչպես նաև Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգով արժեթղթերով գործառնությունների դրամային հաշվարկների հետ կապված վճարումները (այսուհետ՝ ՊԱՀՀՀ): ՀՀ վճարահաշվարկային բնագավառի, այդ թվում՝ համակարգերի վերաբերյալ մանրամասն կարելի է տեղեկանալ «Վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը Հայաստանի Հանրապետությունում» (2010 թ.) հրապարակումից:


³⁶ Մանրամասն տես «Ֆինանսական կայունության հաշվետվություն» (2007 թ.) և «Վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը Հայաստանի Հանրապետությունում» (2010 թ.) հրապարակումները:

Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշը



Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:

Միջին օրական վճարումների, օրվա սկզբում միջին օրական իրացվելիության և միջին օրական հասանելի իրացվելիության համեմատական վերլուծություն (ըստ բոլոր բանկերի)



Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:

Իրացվելիության ռիսկ

2011 թ. ընթացքում արձանագրվել է իրացվելիության ռիսկի գնահատման համար կիրառվող՝ սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշի³⁷ դրական միտում (2010 թ.՝ 1.18, 2011 թ.՝ 1.61):

Համակարգում բոլոր բանկերի գծով օրվա սկզբում միջին իրացվելիությունը, ըստ ամիսների, մշտապես գերազանցել է միջին օրական վճարումները: Ավելին՝ օրվա սկզբում իրացվելիության աճի տեմպը ավելի մեծ է եղել, քան միջին օրական վճարումների աճի տեմպը:

2011թ. երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացվել է նպատակային վերլուծություն, որի ընթացքում վերոնշյալ ցուցանիշները դիտարկվել են նաև ըստ յուրաքանչյուր բանկի: Գնահատման արդյունքները վկայում են, որ 2011 թ. բանկերը միջինում զգալիորեն ավելի շատ իրացվելիություն են ունեցել օրվա սկզբում, քան նրանց անհրաժեշտ է եղել օրվա ընթացքում իրենց վճարումների ապահովման համար:

Վերը նշված ցուցանիշի տեսակետից իրացվելիության ռիսկը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ ցուցանիշի հաշվարկում ընդգրկված չեն հանդիպակաց ստացումները (հաշվի կրեդիտները) և/կամ այլ աղբյուրներից իրացվելիության համալրմանն ուղղված միջոցները:

Իրացվելիության ռիսկի գնահատման համար կարևոր չափանիշ են նաև համակարգում գրանցված մերժումները և դրանց տեսակարար կշիռը համակարգով կատարվող ընդհանուր վճարումներում:

Մասնակիցների մոտ իրացվելիության անբավարարության և այլ խնդիրների բացահայտման համար կարևոր չափանիշներ են նաև համակարգում գրանցված մերժումները և դրանց տեսակարար կշիռը համակարգով կատարվող ընդհանուր վճարումներում:

Զնայած ԷՎՀ-ով կատարվող փոխանցումներում ոչ բավարար իրացվելիության պատճառով մերժումների ծավալային ցուցանիշը նախորդ տարվա համեմատ մոտ 4 անգամ ավելացել է, սակայն այդ մերժումների քանակական ցուցանիշի մոտ 70%-ով նվազումը, ինչպես նաև այդ մերժումների տեսակարար կշռի փոքր արժեքը ԷՎՀ վճարումների թե՛ քանակում (2010 թ.՝ 0.02%, 2011 թ.՝ 0.01%) և թե՛ ծավալում (2010 թ.՝ 0.1%, 2011 թ.՝ 0.4%) փաստում են, որ մերժումների ծավալային ցուցանիշի վերը նշված աճը կարող է պայմանավորված լինել պարզապես մեկ կամ մի քանի բանկի կողմից մեկ կամ մի քանի օրվա ընթացքում իրացվելիության (վճարային հոսքերի) ոչ ճիշտ կառավարմամբ, ինչը չէր կարող անդրադառնալ համակարգի իրացվելիության վրա:

Ելնելով կատարված վերլուծություններից՝ համակարգում իրացվելիության ռիսկի և համակարգային խնդիրների առաջացման հավանականությունը գնահատվել է շատ փոքր:

³⁷ Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշի հաշվարկման հիմքում բանկերի՝ ԴԴ դրամով թղթակցային հաշիվներում օրվա սկզբում առկա իրացվելիության և հաշվով կատարված դեբետների (վճարումների) հարաբերակցությունն է: Ցուցանիշը չի ներառում բանկերի ստացումները (հանդիպակաց վճարումները), որի նպատակն է իրականացնել սթրես - իրավիճակի վերլուծություն՝ գնահատելու համար օրվա ընթացքում լրացուցիչ իրացվելիություն չստանալու պայմաններում բանկերի վճարումների մերժման հավանականությունը, այն է՝ որքանով կարող են բանկերն ապահովել իրենց վճարումները միայն օրվա սկզբում առկա սեփական միջոցների հաշվին: Բանկերի կողմից իրենց հաշիվների կանխիկով ամրագրումները ներառված չեն հաշվարկում: Ցուցանիշը հաշվարկվում է ըստ համակարգի (բոլոր բանկերինը՝ համախառն), և ըստ առանձին բանկերի ցուցանիշները կարող են տարբերվել:

Վճարումների ժամային բաշխվածությունը

2011 թ. միջին եռամսյակային վճարումների ժամալի և քանակի ժամային բաշխումն օրվա ընթացքում շարունակել է անհավասարաչափ մնալ:

Չնայած օրվա ոչ պիկային ժամերին (10:00-15:00 ժամանակահատվածում) վճարումների բաշխումը վերջին տարիների համեմատ փոքր-ինչ հարթեցվել է, սակայն կուտակումներն օրվա վերջում (15:00-17:00 ժամանակահատվածում) շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել ինչպես վճարումների միջին օրական քանակում, այնպես էլ դրանց ծավալում (համապատասխանաբար՝ 30-ական տոկոս):

Մոնիտորինգի արդյունքները ցույց են տվել, որ վերջին երեք տարիների ընդհանուր վճարումներում ցանկացած նշանակալի աճ օրվա ընթացքում գրեթե ամբողջությամբ բաժին է ընկել օրվա վերջին ժամերին:

Օրվա վերջում վճարումների կուտակումները, համապատասխան իրացվելիության անբավարարության կամ համակարգում գործառնական խափանումների առաջացման դեպքում, կարող են հանգեցնել օրվա վճարումների գերակշիռ մասի մերժման կամ հետաձգման՝ առաջացնելով համակարգային ռիսկեր: Սակայն հաշվի առնելով իրացվելիության և հասանելիության ցուցանիշների դրական արդյունքները, համակարգում թողունակության բավարար մակարդակը, էական միջադեպերի բացակայությունը և մերժումների աննշան կշիռը ընդհանուր վճարումներում (մանրամասն տես նախորդ ենթաբաժինները)՝ 2011 թ. օրվա ընթացքում կատարվող վճարումների անհավասարաչափ բաշխումն ու օրվա վերջում կուտակումները խնդիրներ չեն ստեղծել, և ռիսկի առաջացման հավանականությունը, ընդհանուր առմամբ, դեռևս գնահատվում է ցածր:

Համակարգի թողունակությունը

Համաձայն համակարգի օպերատորի նախնական փորձագիտական գնահատման՝ 2008 թ. սկսած, ԷՎՀ-ի միջոցով ապահովվում է ժամում ավելի քան 4300 վճարում (միջինը՝ 30000 վճարում/օր):


ԷՎՀ-ում վճարումների առավելագույն քանակը 2011 թ. կազմել է 5420 վճարում/ժամ (2010 թ.՝ 4931 վճարում/ժամ), ինչը վկայում է, որ համակարգի թողունակության նվազագույն շեմը ավելի բարձր է, և համակարգը կարող է մշակել առնվազն մոտ 5500 վճարում/ժամ:

2011 թ. ընթացքում ամսական ցուցանիշների բարձրակետերը հիմնականում գերազանցել են, իսկ մնացած դեպքերում շատ մոտ են եղել ներուժային նվազագույն թողունակության շեմին (ժամում 4300 վճարում): Ընդ որում՝ պիկային մեծությունները գրանցվել են հիմնականում ժամը 15:00-ից հետո՝ ԷՎՀ-ի փակման ժամերին շատ մոտ:


2011թ., նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, գրանցվել է ժամում 2500 սահմանաչափը գերազանցող դեպքերի նկատելի ավելացում՝ կազմելով միջինում աշխատանքային ժամերի 22%-ը (դեկտեմբերին՝ 43%): Զգալի աճ է նկատվել նաև նյութ ցուցանիշների գծով (3500, 4300 վճարում ժամում և ավելի):

Այսպիսով, թեև 2011 թ. ընթացքում գրանցվել է թողունակության գնահատման համար հաշվարկվող բոլոր ցուցանիշների զգալի ավելացում, սակայն, հաշվի առնելով, որ նման դեպքերն ընդհանուր վճարումներում դեռևս մեծ մաս չեն կազմել, պիկային ժամերի ընթացքում կատարված վճարումների տեսակարար


2010-2011 թթ. միջին եռամսյակային և տարեկան վճարումների ժամալի ժամային բաշխումն օրվա ընթացքում դրանց տեսակարար կշիռների




2010-2011 թթ. միջին եռամսյակային և տարեկան վճարումների քանակի ժամային բաշխումն օրվա ընթացքում դրանց տեսակարար կշիռների




ԷՎՀ-ով 2011թ. եռամսյակների ընթացքում և 2010-2011թթ. տարվա կտրվածքով միջին օրական վճարումների ժամալի ժամային գրաֆիկը՝ առանց բորսայական փոխանցումների




ԷՎՀ-ով 2011թ. եռամսյակների ընթացքում և 2010-2011թթ. տարվա կտրվածքով միջին օրական վճարումների քանակի ժամային գրաֆիկը՝ առանց բորսայական փոխանցումների




Վճարում/ժամ առավելագույն քանակը՝ ըստ ամիսների



2500 և ավելի վճարում/ժամ ցուցանիշի դինամիկան և կշիռը տվյալ ամսվա ընդհանուր գործառնական ժամերում




Պիկային ժամերի ընթացքում կատարված վճարումների տեսակարար կշիռները տվյալ օրվա վճարումներում



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ժամում 2500, 3500 և 4300 սահմանաչափերը գերազանցող վճարումների դինամիկան



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

կշիռները այդ օրերի ընդհանուր վճարումների քանակում և հատկապես ծավալում ունեցել են զգալի նվազման միտում, բացառապես են այդ ժամանակահատվածում փաստացի գրանցված միջադեպերը՝ թողունակության հետ կապված ռիսկերի առաջացման հավանականությունը, ընդհանուր առմամբ, դեռևս զնահատվում է ցածր:

Թողունակության հետ կապված ռիսկերը զնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ փորձագետների կողմից զնահատվել է պոտենցիալ թողունակության նվազագույն, այլ ոչ թե առավելագույն շենը, և որ համակարգի գործառնական հասանելիությունը շարունակել է մնալ միջազգային չափանիշներին համապատասխանող բարձր մակարդակի վրա (տես «Համակարգի գործառնական հասանելիությունը» ենթաբաժինը):

Համակարգի գործառնական հասանելիությունը

2011 թ. ընթացքում Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի անխափան աշխատանքի վրա ազդեցություն են ունեցել որոշ չափով նշանակալի (30 րոպե և ավելի տևողությամբ) ընդամենը 5 միջադեպեր: Ամենաերկար միջադեպի պատճառ է դարձել CBANet սերվերի մոտ 3 ժամ տևողությամբ խափանումը, որը, սակայն, եղել է ոչ պիկային ժամերին և համակարգի թողունակության բարձր շենի շնորհիվ հնարավոր է եղել օրն ավարտել առանց գործառնական օրվա երկարաձգման:

Վերլուծությունը ցույց է տվել, որ համակարգում գրանցված միջադեպերի ինչպես քանակը, այնպես էլ տևողությունը մեծ չեն եղել՝ համակարգի հասանելիության խաթարման տեսանկյունից:

Հաշվետու ժամանակաշրջանի համար ԷԿՀ-ի գործառնական հասանելիությունը կազմել է 99.4%, ինչը, ըստ միջազգային չափանիշների, բարձր ցուցանիշ է³⁸:

Այսպիսով, ԷԿՀ-ի հասանելիության մակարդակի զնահատումը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ համակարգի կառուցվածքը և պահուստային արարողակարգերը ավելի քան բավարար են համակարգային ռիսկերից խուսափելու համար:

CBANet ցանցի հասանելիությունը

2011 թ. ընթացքում CBANet ցանցի հանգույցների խափանումները զգալի կրճատվել են (ընդամենը՝ 4) և չեն եղել, որի արդյունքում ցանցի բոլոր հանգույցների գործառնական հասանելիությունը կազմել է 99.99%, իսկ օրացուցային հասանելիությունը՝ 100%: Երևանի հանգույցների հասանելիությունը կազմել է 100%:

Հաշվետու ժամանակաշրջանում կտրուկ նվազել են երկարատև խափանումները: ՀՀ մարզերում ցանցի խափանումները եղել են Գեղարքունիքի և Լոռու մարզերում: Ամենաերկար խափանումը արձանագրվել է Լոռիում՝ մոտ 7 գործառնական ժամ: Այնուամենայնիվ, նշված մարզում գործառնական հասանելիությունը կազմել է 99.87%:

Հաշվի առնելով, որ վերը նշված մարզերում ԷԿՀ վճարումները կազմել են ընդհանուր ԷԿՀ վճարումների աննշան մասը (մինչև 1%-ը)՝ կարելի է եզրակացնել, որ CBANet ցանցի՝ ՀՀ մարզերի քաղաքային հանգույցների խափանումների պատճառով միջբանկային վճարումների հնարավոր ուշացումների ազդեցությունը ընդհանուր միջբանկային վճարումների վրա չնչին էր, և չի

³⁸ Դանիայի Ազգային բանկի 2008 թ. ֆինանսական կայունության հաշվետվության մեջ նշվում է, որ համաձայն ESCB-ի կողմից համակարգային նշանակություն ունեցող RTGS համակարգերի համար սահմանված չափանիշների՝ գործառնական հասանելիությունը պետք է շատ բարձր լինի. օրինակ՝ TARGET-ի գործառնական հասանելիությունը 99.65 % էր, ինչը լավ ցուցանիշ է համարվում:

գրանցվել որևէ բացասական ազդեցություն ֆինանսական կայունության տեսակետից:

Երևանում քաղաքային հանգույցների խափանման դեպքեր չեն գրանցվել:

2011 թ. գլխամասային բաժանորդների աշխատանքի խափանումներ չեն գրանցվել. և՛ գործառնական, և՛ օրացուցային հասանելիությունը կազմել է 100%՝ ինչը պայմանավորված է առցանց պահուստային կապի առկայությամբ:

Ընդհանուր առմամբ կարելի է գնահատել, որ CBANet միջբանկային համակարգչային ցանցի տեխնիկաժրագրային միջավայրը և պահուստային միջոցները ապահովում են ԷԿՀ համակարգի կայուն աշխատանքը:

5.2. ԱՐԺԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՀՀ-ում արժեթղթերի հաշվարկներն իրականացվում են 2 համակարգերի միջոցով. կորպորատիվ արժեթղթերի գծով՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի համակարգով» (այսուհետ՝ ՀԿԴ), իսկ պետական (գանձապետական) և ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերի գծով՝ Կենտրոնական բանկի «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգով» (այսուհետ՝ ՊԱՀՀ համակարգ):

2011 թ. ընթացքում ՊԱՀՀ համակարգով կատարվել են երկրորդային շուկայի գործարքների հետ կապված ավելի քան 2876631 մլն ՀՀ դրամի գործառնություններ, ինչը նախորդ տարվա համեմատ ավելի է 61%-ով: 2011 թ. ՊԱՀՀ համակարգում իրականացված գործարքները կազմել են ՀՀ արժեթղթերի հաշվարկային համակարգերով երկրորդային շուկայում կատարված գործառնությունների մոտ 97%-ը: Այդ առումով՝ ֆինանսական կայունության տեսակետից, ՊԱՀՀ համակարգը շարունակում է ունենալ առանցքային նշանակություն և դասվում է համակարգային նշանակություն ունեցող համակարգերի շարքը:

ԿԲ պետական պարտատոմսերի հաշվառման և հաշվարկների համակարգով կատարված արժեթղթերի փոխանցումներ՝ կապված երկրորդային շուկայում արժեթղթերով կնքված գործարքների հետ³⁹

Գործառնություններ	2009թ.	2010թ.	2011թ.
Արտաբորսայական գործարքների (առուվաճառք և ռեպո) հետ կապված գործառնություններ (անվանական արժեքով՝ մլն ՀՀ դրամ)	984374.736	1781748.727	2870957.967
Բորսայական գործարքների (առուվաճառք) հետ կապված գործառնություններ (անվանական արժեքով՝ մլն ՀՀ դրամ)	2403.029	5802.422	5673.775
Ընդամենը	986777.765	1787551.149	2876631.742

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

ՊԱՀՀ համակարգում արտաբորսայական գործարքների հետ կապված հաշվարկներում կիրառվում է «առաքում» վճարման դիմաց» (DVP) սկզբունքը, բորսայական գործարքները կատարվում

³⁹ Ներկայացված վիճակագրական տեղեկատվությունն արտացոլում է ՊԱՀՀ համակարգի կողմից կատարված հաշվարկները և չի ընդգրկում ենթապահառուների կողմից իրենց հաճախորդների համար կատարված մերթիմ փոխանցումները:

են արժեթղթերի և դրամական միջոցների նախնական դեպոզիտացմամբ, ինչը հնարավորություն է տալիս կրճատելու գործընկերոջ ռիսկը: Համակարգում կիրառվող համախառն եղանակով հաշվարկների իրականացման և անվերադարձելիության սկզբունքները բացառում են վարկային ռիսկի առաջացումը:

2011 թ. ՊԱՀՀ համակարգում տեղի է ունեցել 11 պատահար (2010 թ.՝ 8):

Արձանագրված պատահարներից միայն 3-ն են անդրադարձել շուկաներում գործարքների սահմանված ժամկետների կատարման վրա, իսկ մնացած 8-ի դեպքում, օպերատիվ միջամտության և պատահարների շտկման արդյունքում, վերջնահաշվարկները կատարվել են ժամանակին:

Նշված պատահարներից մեկն ազդել է պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման աճուրդի, մյուսը՝ հետգնման աճուրդի ավարտման, իսկ 3-րդը՝ պետական արժեթղթերի երկրորդային շուկայի գործարքների վերջնահաշվարկի ժամկետների վրա:

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է արձանագրել, որ ՊԱՀՀ համակարգի գործառնական հասանելիությունը բարձր է, և համակարգը կարելի է գնահատել որպես հուսալի և անվտանգ:

2011 թ. շարունակվել են աշխատանքները արժեթղթերի շուկայի հաշվարկային և քլիրինգային ենթակառուցվածքների հետագա զարգացման ուղղությամբ: Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորում իրականացնող «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՓԲԸ-ի կողմից կորպորատիվ պարտատոմսերի թողարկումը և շրջանառությունը ապահովելու նպատակով Կենտրոնական բանկի և «ՆԱՍԴԱՔ Օ-ԷՄ-ԷՔՍ Արմենիա» ԲԲԸ կողմից աշխատանքներ են կատարվել այդ պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության, քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման համապատասխան ընթացակարգերի և մեխանիզմների մշակման և ներդրման ուղղությամբ: Մասնավորապես՝ մշակվել են հիփոթեքային պարտատոմսերի «առաքում՝ վճարման դիմաց» սկզբունքով արտաբորսայական գործարքների կազմակերպման ընթացակարգերը, ինչպես նաև իրականացվել են համապատասխան փոփոխություններ Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվարկային համակարգում: Ընդ որում՝ «առաքում՝ վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի առուվաճառքի հնարավորությունը այսուհետ գործում է նաև Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից հաշվառվող բոլոր արժեթղթերով գործարքների իրականացման ժամանակ, ինչը հնարավորություն է տալիս զգալիորեն նվազեցնելու գործընկերոջ ռիսկը:

Շարունակվել են Կենտրոնական բանկի ռեպո ավտոմատացված համակարգի ներդրման աշխատանքները, ավարտվել են համակարգի մշակումն ու թեստավորումը, նախատեսվում է 2012 թ. առաջին կիսամյակում ավարտել համակարգի փորձնական շահագործումը և ներդնել համակարգը:

ԱՍՓՈՓՈՒՄ

Ընդհանուր առմամբ, ԷՎՀ գործունեությունը գնահատվում է բավարար: Այնուամենայնիվ, ցուցանիշների շարժը վկայում է, որ անհրաժեշտ է իրականացնել մշտադիտարկում՝ համակարգի թողունակության հետ կապված խնդիրների և օրվա վերջում վճարումների կուտակումների հետ կապված ռիսկերի բացառման նպատակով: Պետական արժեթղթերի հաշվառման և հաշ-

վարկների իրականացման համակարգը ևս գործում է կայուն և համակարգային ռիսկեր չի առաջացնում:

Այսպիսով՝ ֆինանսական կայունության տեսակետից վճարահաշվարկային ոլորտի զարգացումները կառավարելի շրջանակներում են և խոցելի ռիսկեր չեն առաջացնում:

5.3. ԱՎԱՆՂՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) իր գործունեությամբ նպաստում է ՀՀ բանկային համակարգի կայունությանը, ՀՀ բանկային համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը՝ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու միջոցով:

2011 թ. ընթացքում ֆիզիկական անձանց բանկային ավանդներն ունեցել են կայուն աճ:

2011 թ. երկրորդ կիսամյակի վերջին, նախորդ կիսամյակի վերջի համեմատությամբ, ֆիզիկական անձանց բանկային ավանդների գումարն ավելացել է շուրջ 18%-ով, իսկ երաշխավորված ավանդների գումարը՝ 17.4%-ով: 2011 թ. երկրորդ կիսամյակի ընթացքում երաշխավորված ավանդ ունեցող ավանդատուների թիվն ավելացել է 9.7%-ով և կազմել է 1178259 (նշված հաշվարկում ներառված չեն «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ-ում հաշվառվող՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ավանդատուները): ՀՀ բանկային համակարգում ավանդատուների գերակշիռ մասը միայն ՀՀ դրամով ավանդներ ունեցող ավանդատուներն են: Այսպես, 2011 թ. երկրորդ կիսամյակի վերջի դրությամբ միայն ՀՀ դրամով ավանդ ունեցող ավանդատուների կշիռն ավանդատուների ընդհանուր թվի մեջ կազմել է 82.6%, իսկ միայն արտարժույթով ավանդ ունեցող ավանդատուների կշիռը՝ 7.2%: Հիմնադրամի գնահատումների համաձայն՝ ավանդատուների ընդհանուր թվի շուրջ 98%-ը երաշխավորված ավանդի չափը չգերազանցող ավանդ ունեցող ավանդատուներ են:


5.4. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ ԵՎ ԱՔՈՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

ՀՀ ԿԲ վարկային ռեգիստր

2003 թվականի հունվարի 1-ից Կենտրոնական բանկում գործում է Վարկային ռեգիստրը՝ իրականացնելով վարկառուների վերաբերյալ տվյալների հավաքագրում, ամփոփում և տրամադրում առևտրային բանկերին, վարկային կազմակերպություններին և վարկառուներին: Վարկային ռեգիստրում հաշվառվում են 1.5 մլն դրամը գերազանցող և մինչև 1.5 մլն դրամ, սակայն ժամկետին չմարված և դասակարգված վարկերը: 2011 թվականի վերջին ԿԲ վարկային ռեգիստրում հաշվառվող վարկերի թիվը հասել է 1087912-ի, որից 999729-ը՝ ֆիզիկական անձանց, իսկ 88183-ը՝ իրավաբանական անձանց վերաբերյալ: Նախորդ տարվա համեմատ, 2011 թվականի ընթացքում վարկերի թիվն ավելացել է 194464-ով:


2011 թ. վերջի տվյալներով՝ Վարկային ռեգիստրում առկա է եղել 181305 գործող և 906607 մարված վարկերի վերաբերյալ տեղեկատվություն: Նախորդ տարվա համեմատ, հաշվառվող վարկերի ընդհանուր թիվն աճել է 1.2 անգամ, ինչը վկայում է վարկային ակտիվության բարձրացման մասին, սակայն նկատ

Վարկային ռեզիստորում գրանցված վարկերի քանակն ըստ ամիսների




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Նոր տրամադրված և Վարկային ռեզիստորում գրանցված վարկերի քանակն ըստ ամիսների



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Վարկային ռեզիստորի կողմից ստացված հայտերի քանակն ըստ ամիսների



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

տեմք նաև, որ 2007-2008թթ. համեմատ (աճ՝ 1.4 անգամ), նույն ցուցանիշը նվազել է՝ պայմանավորված վարկային շուկայում ստեղծված ճգնաժամային իրավիճակով: Հաշվառվող վարկերի քանակի մեծացմանը զուգընթաց, փոխվել են նաև մուտքագրվող տեղեկատվության ծավալները. 2011 թ. տեղեկատվության մուտքը վարկային ռեզիստոր կազմել է օրական միջինը 9000 գրառում՝ նախորդ տարվա համեմատ աճելով 12.5%-ով: Արդյունքում՝ ավելի ամբողջական է դարձել վարկառուների վարկարժանության որոշման և վերահսկողական նպատակներով օգտագործվող տեղեկատվությունը՝ հնարավորություն ընձեռելով ավելի արդյունավետ գնահատելու վարկատուների վարկային ռիսկը՝ խուսափելով անպարտաճանաչ վարկառուներից:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների գերակշիռ մեծամասնությունն ավտոմատացրել է Վարկային ռեզիստորին տվյալների տրամադրման գործընթացը, ինչի արդյունքում մեծացել է համակարգի արագագործությունը: ԿԲ «Վարկային ռեզիստոր» ծրագրային համակարգի կատարելագործման արդյունքում վարկային պատմությունները բանկերին և վարկային կազմակերպություններին տրամադրվում են հարցումը ստանալուց առավելագույնը մեկ օրվա ընթացքում: Նվազագույնի է հասել վարկային ռեզիստոր ներկայացվող տվյալների մեջ սխալների տեսակարար կշիռը:

Հայտերի քանակն առաջին կիսամյակի ընթացքում ավելացել է, իսկ երկրորդ կիսամյակի ընթացքում՝ նվազել, սակայն ողջ տարվա կտրվածքով հայտերի քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է 6530-ով, ինչը պայմանավորած է տրամադրված վարկերի քանակի աճով: Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների մեծ մասի համար շարունակաբար աճում է վարկային պատմության կարևորությունը՝ հատկապես նոր հաճախորդների վարկավորման դեպքում: 2011 թ. ավելացել է և՛ տրամադրված վարկերի, և՛ ստացված հայտերի քանակը:

2011 թ. բարձրացել է նաև վարկառուների գործարար կարգապահությունը, նվազել են վարկերի մասնակի մարումների ուշացումները: Վերջինս հաճախորդների կողմից իրենց վարկային պատմության կարևորության գիտակցման արդյունք է:

Վարկային ռեզիստորում հաշվառվող տեղեկատվության ծավալների, ինչպես նաև տեղեկատվության օգտագործման ցուցանիշների աճը, ըստ ամենայնի, կշարունակվի նաև 2012 թվականին: Ելնելով առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքներից՝ կարելի է եզրակացնել, որ 2012 թ. վերջին Վարկային ռեզիստորին տեղեկատվություն տրամադրող բոլոր վարկատուները կավտոմատացնեն տեղեկատվության տրամադրումը վարկային ռեզիստորին:

Կշարունակվեն իրականացվել նաև մեթոդաբանական փոփոխություններ՝ բացահայտվող սխալների քանակի նվազեցման և գործունեության օպերատիվության բարձրացման նպատակով:

ԱՔՈԱ վարկային բյուրո

2011 թ. ընթացքում ԱՔՈԱ վարկային բյուրոյի տվյալների բազայում գրանցված հաճախորդների թիվը 2010 թ. համեմատ ավելացել է 21%-ով և դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1195000 հաճախորդ, որոնց 97.5%-ը ֆիզիկական անձինք են:

Տվյալների բազայում առկա վարկերի քանակը 2011 թ., 2010 թ. համեմատ, ավելացել է 32%-ով և տարեվերջին կազմել է 5592000 հատ:

Յուրաքանչյուր քաղաքացի կամ իրավաբանական անձ կարող է վարկային բյուրոյից ստանալ իր վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվություն: Որպեսզի իրավաբանական անձը կարողանա տեղեկատվություն ստանալ իր հաճախորդի, գործընկերոջ վարկային պատմության վերաբերյալ, պետք է վարկային բյուրոյի հետ կնքի ծառայությունների մատուցման պայմանագիր և ստանա վարկային պատմության սուբյեկտի գրավոր համաձայնությունը:

Վարկային բյուրոն վարկային զեկույցներ սկսել է տրամադրել 2007 թվականի ապրիլից: 2011 թ. տրամադրած վարկային զեկույցների քանակը 2010 թ. համեմատ ավելացել է 65%-ով:

2011թ. Վարկային բյուրոն տեղեկատվություն է ստանում նաև կոմունալ-կենցաղային ծառայություններ մատուցող ծառայություններից՝ *Երևանջուր, Հայջրնուղկոյուղի և Հայռուսգազարդ* ընկերություններից: ԱՔՌԱ տվյալների բազայում ներառվում է տեղեկատվություն սահմանված ժամկետում չվճարումների վերաբերյալ: Բանակցություններ են վարվում հեռահաղորդակցական ծառայություններ մատուցող՝ *Արմենտել, Վիվասել, Օրանժ* ընկերությունների հետ՝ տեղեկատվության շրջանառման կազմակերպման ուղղությամբ:

ԱՔՌԱ վարկային բյուրոն տեղեկատվություն է ստանում նաև հանրային տվյալների բազաներից՝ ՀՀ ոստիկանության և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հանրային բազաներից: Բանակցություններ են վարվում նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեից սահմանված ժամկետում չվճարված հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման համար:


ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից 2011 թ. ներդրվել է *ԱՔՌԱ Սքոր* ծառայությունը: ԱՔՌԱ Սքոր վարկային սքորինգը վարկային ռիսկի վիճակագրական և գործառնական մոդելավորման տարբերակ է, որը ենթադրում է վարկառուի վարկային ռիսկի թվային գնահատականի ներկայացում: Վարկային սքորինգը գերազանցապես հենվում է վիճակագրական մեթոդների վրա և հնարավորինս բացառում է փորձագիտական գնահատումների կիրառումը՝ վարկարժանության թվային գնահատական ստանալու գործընթացում:

2011 թ. ներդրվել է նաև *Վարկառուի մշտադիտարկում*, ինչը հնարավորություն է տալիս բանկին կամ վարկային կազմակերպությանը անմիջապես տեղեկանալու իր ընտրած վարկառուների կողմից այլ հաստատություններում վարկային կամ ֆինանսական պարտավորության կատարման, վարկառուների վարկային պատմության մեջ կատարվող, այդ թվում՝ նույնականացման տվյալների (օրինակ՝ հասցե, կազմակերպության տնօրեն և այլն) ցանկացած փոփոխության վերաբերյալ:


Ներդրվել է նաև *Առցանց ինքնահարցում* ծառայությունը, որը հնարավորություն է տալիս ցանկացած վայրից, ինտերնետի միջոցով, գրանցվելով ԱՔՌԱ պորտալում, առցանց ստանալու վարկային զեկույցներ, որի համար վճարումը կատարվում է նույնպես առցանց՝ «ԱրՔա» փրոտուալ կամ «Մաստեր քարտի» միջոցով:

Վարկային բյուրոյի կողմից տնօրինվող տեղեկատվության պահպանման և այլ անձանց կողմից անօրինական օգտագործման բացառման նպատակով մշակվել է տվյալների բազայի պահպանման բազմաստիճան կողավորված համակարգ: Համակարգում գրանցվում են բոլոր գործողությունները, կիրառվում է համակարգի մշտադիտարկում՝ կասկածելի և չարտոնված գործողությունները բացառելու, կանխելու համար:


ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկառուների քանակը (հազար հատ)



ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկերի քանակը (հազար հատ)



ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից տրամադրված զեկույցների քանակը



Աղբյուրը՝ ԱՔՌԱ վարկային բյուրո:

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

<i>Տնտեսական աճի ցուցանիշներն ըստ տարածաշրջանների</i>	11
<i>Գործազրկության շարժը զարգացած երկրներում</i>	11
<i>Համաշխարհային առևտրի տարեկան տոկոսային աճը</i>	12
<i>ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Չինաստանի և Եվրոգոտու երկրների ընթացիկ հաշիվները</i>	12
<i>Նավթի («բրենթ» տեսակի) գները</i>	13
<i>Պղնձի գները</i>	13
<i>Մոլիբդենի գները</i>	13
<i>Հացահատիկի գները</i>	13
<i>Ոսկու գները</i>	13
<i>Գնաճը մի շարք երկրներում</i>	14
<i>Նավթի գնի և ՌԴ արտահանման միտումները</i>	14
<i>Ռուսական ռուբլու միջին ամսական փոխարժեքը</i>	15
<i>Վրաստանի ՀՆԱ և օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը</i>	17
<i>Միջբանկային տոկոսադրույքները</i>	19
<i>Կենտրոնական բանկերի տոկոսադրույքների քաղաքականությունը</i>	19
<i>10 տարի ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը</i>	20
<i>ԱՄՆ դոլարի փոխարժեքը եվրոյի և ՄԲ ֆունտ ստեռլինգի նկատմամբ</i>	20
<i>Բորսայական ինդեքսները</i>	20
<i>Տնտեսության հիմնական ճյուղերի տարեկան աճը</i>	22
<i>Տնտեսության հիմնական ճյուղերի վարկավորման աճը</i>	22
<i>ՀՆԱ ծախսային բաղադրիչները</i>	23
<i>Արտաքին պարտքի ծավալը և արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը</i>	24
<i>Սպառողական գների և ներմուծված ապրանքների գների ինդեքսները</i>	24
<i>ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ</i>	25
<i>ՀՀ ներմուծումն ըստ ապրանքախմբերի</i>	25
<i>ՀՀ արտահանումն ըստ ապրանքախմբերի</i>	25
<i>Հայաստանի արտաքին առևտրի բաշխվածությունն ըստ երկրների</i>	26
<i>Զուտ մասնավոր տրանսֆերտներ և աշխատողների եկամուտներ</i>	26
<i>Բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային զուտ փոխանցումներ</i>	26
<i>Բնակչության պարտքի բեռի ցուցանիշները</i>	26
<i>Բնակչության ֆինանսական պարտավորությունների կառուցվածքը</i>	27
<i>ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների սպառողական վարկային պորտֆելի կառուցվածքը</i>	27
<i>Բանկերի և վարկային կազմակերպությունների հիփոթեքային վարկերի պորտֆելը</i>	27
<i>Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի միջին կշռված տոկոսադրույքները</i>	28
<i>Բանկերում չաշխատող վարկերի տեսակարար կշիռն ըստ արժույթների</i>	28
<i>Միջին անվանական աշխատավարձ</i>	28
<i>Ապագա պայմանների ինդեքսը և դրա բաղադրատարրերը</i>	28
<i>Բնակարանների միջին գների ինդեքսը երևանում</i>	29
<i>Շինարարության վարկերի ծավալը, աճը և դրանցում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը</i>	29

Անշարժ գույքի գործառնությունների քանակի ինդեքսը	29
Առուվաճառքի և հիփոթեքային վարկերի քանակի մարզային բաշխվածությունը 2011թ. ընթացքում	30
Ռեպո գործառնությունների ծավալները և տոկոսադրույքների մակարդակները	31
Վարկային ռեսուրսների հարթակում իրականացված գործարքների ծավալը և միջին կշռված տոկոսադրույքը	31
ԿԲ-ում առևտրային բանկերի` ԴԴ դրամով թղթակցային հաշիվների և ԴԴ դրամով պահուստավորման ենթակա միջոցների հարաբերակցությունը	31
ԴԴ պետական պարտատուների եկամտաբերության կորեր	32
Պետական գանձապետական կարծաժամկետ պարտատուների տեղաբաշխման ծավալները և միջին կշռված եկամտաբերությունները	32
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առք ու վաճառքի գործառնությունները	32
ՊՊ առուվաճառքի գործառնությունների և ՊՊ գործառնությունների ծավալ/շրջանառությունում առկա ՊՊ ծավալ հարաբերակցությունը	33
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված ռեպո գործառնությունները` ըստ գործարքի հիմքում ընկած արժեթղթերի տեսակների (առանց ԴԴ ԿԲ հետ գործարքների)	33
Արժեթղթերի կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առք ու վաճառքի գործառնությունները	33
ԴԴ արժուքային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները և փոխարժեքները	34
Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքն ըստ ֆինանսական հաստատությունների	36
Բանկային համակարգի կայունության քարտեզ	36
Ֆինանսական միջնորդության մակարդակը	37
Օտարերկրյա ներդրողների մասնակցությունը ԴԴ բանկային համակարգի կապիտալում	37
4 խոշորագույն բանկերի ակտիվների, պարտավորությունների և կապիտալի տեսակարար կշիռները ընդհանուր բանկային համակարգում	37
Վարկային ներդրումների տարեկան աճը	38
Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները	38
Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում	38
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռները ընդհանուր վարկերում	39
Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդն ըստ տնտեսության ծյուղերի	39
Վարկերի կորուստների դինամիկ աճի դեպքում կապիտալի համարժեքության նորմատիվը խախտող բանկերի թիվը ...	39
Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը 31.12.2011թ. դրությամբ	40
ԴԴ բանկային համակարգի իրացվելիության նորմատիվների փաստացի և նորմատիվային մեծությունների շարժը	40
Բանկային համակարգի ակտիվների հարաբերությունը պարտավորություններին` ըստ մարմանը մնացած ժամկետայնությունների	40
Բանկային համակարգի խոշոր պարտավորությունների հարաբերությունը ընդհանուր պարտավորություններին	41
Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի դեպքում իրացվելիության նորմատիվները խախտող բանկերի թիվը	41
Բանկային համակարգի` արտարժույթի առք ու վաճառքից և վերագնահատումից ստացված զուտ եկամուտները	42
Բանկային համակարգի ավանդների և վարկերի միջին տոկոսադրույքները	43
Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը	43
Ընդհանուր կապիտալի համարժեքությունն ըստ բանկերի (31.12.2011 թ. դրությամբ)	44
Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշներ	44
Բանկային համակարգի ROA-ն Արևելյան Եվրոպայի և ԱՊՅ երկրներում	44
Բանկային համակարգի ROE-ն Արևելյան Եվրոպայի և ԱՊՅ երկրներում	45
Բանկային համակարգի եկամուտները և ծախսերը	45

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդն ըստ տնտեսության ծյուղերի	46
Ապահովագրական համակարգի ակտիվների կառուցվածքը 31.12.11 թ. դրությամբ	47
ԳԳ ապահովագրական համակարգի հիմնական բնութագրիչները	47
Ապահովագրավճարներ / ԳՆԱ հարաբերակցությունը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում (2010թ.)	47
Ապահովագրական համակարգի վնասաբերության և ծախսատարության ցուցանիշները	48
Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության կառուցվածքը 31.12.2011թ. դրությամբ	48
Ներդրումային ընկերությունների կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը 31.12.2011թ. դրությամբ	49
Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշը	52
Միջին օրական վճարումների, օրվա սկզբում միջին օրական իրացվելիության և միջին օրական հասանելի իրացվելիության համեմատական վերլուծություն (ըստ բոլոր բանկերի)	52
2010-2011 թթ. միջին եռամսյակային և տարեկան վճարումների ծավալի ժամային բաշխումն ըստ օրվա ընթացքում դրանց տեսակարար կշիռների	53
2010-2011 թթ. միջին եռամսյակային և տարեկան վճարումների քանակի ժամային բաշխումն ըստ օրվա ընթացքում դրանց տեսակարար կշիռների	53
ԷՎԳ-ով 2011թ. եռամսյակների ընթացքում և 2010-2011թթ. տարվա կտրվածքով միջին օրական վճարումների ծավալի ժամային գրաֆիկը՝ առանց բորսայական փոխանցումների	53
ԷՎԳ-ով 2011թ. եռամսյակների ընթացքում և 2010-2011թթ. տարվա կտրվածքով միջին օրական վճարումների քանակի ժամային գրաֆիկը՝ առանց բորսայական փոխանցումների	53
Վճարում/ժամ առավելագույն քանակը՝ ըստ ամիսների	54
2500 և ավելի վճարում/ժամ ցուցանիշի դինամիկան և կշիռը տվյալ ամսվա ընդհանուր գործառնական ժամերում	54
Պիկային ժամերի ընթացքում կատարված վճարումների տեսակարար կշիռները տվյալ օրվա վճարումներում	54
ժամում 2500, 3500 և 4300 սահմանաչափերը գերազանցող վճարումների դինամիկան	54
Վարկային ռեզիստրում գրանցված վարկերի քանակն ըստ ամիսների	58
Նոր տրամադրված և Վարկային ռեզիստրում գրանցված վարկերի քանակն ըստ ամիսների	58
Վարկային ռեզիստրի կողմից ստացված հայտերի քանակն ըստ ամիսների	58
ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկառուների քանակը	59
ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկերի քանակը	59
ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից տրամադրված զեկույցների քանակը	59

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

2011 թ. համաշխարհային տնտեսական աճի գնահատականի վերանայումները ԱՄՆ կողմից	10
ՀՀ պարտքը բնութագրող որակական ցուցանիշներ	24
Բնակելի շենքերի գործարկումն ըստ ֆինանսավորման աղբյուրների	29
31.12.11 թ. դրությամբ շրջանառությունում գտնվող պետական պարտատոմսերի մոդիֆիկացված դյուրացիայի ցուցանիշը տարբեր ժամկետային խմբերի համար	32
31.12.11 թ. դրությամբ առևտրային բանկերի՝ առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի պետական պարտատոմսերի պորտֆելի մոդիֆիկացված դյուրացիայի ցուցանիշը և եկամտաբերության 1% փոփոխության դեպքում հավանական շահույթ/վնասի մեծությունը տարբեր ժամկետային խմբերի համար	32
2008 - 2011 թթ. համար բաժնետոմսերի թողարկողներ առաջատար եռյակի և հնգյակի կենտրոնացվածությունն ըստ կապիտալացման մակարդակի	34
Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից	37
Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	39
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենար	40
Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	41
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենար	41
Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	42
Տոկոսադրույքի ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	43
Անշարժ գույքի գների փոփոխության սթրես-սցենարներ	44
Վարկային կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և շահույթի մեծությունները	45
Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	46
Վճարունակության գնահատման սթրես-սցենար	48
Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	48
Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	49
Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար	49
ԿԲ պետական պարտատոմսերի հաշվառման և հաշվարկների համակարգով կատարված արժեթղթերի փոխանցումներ՝ կապված երկրորդային շուկայում արժեթղթերով կնքված գործարքների հետ	55

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀԱՏԵ	Համախառն ազգային տնօրինվող եկամուտ
ԱԿԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԵԿԲ	Եվրոպական կենտրոնական բանկ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՖՀՄՍ	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ
ԱՊՊԱ	Ավտոտրանսպորտային պատասխանատվության պարտադիր ապահովագրություն
ՀԿԴ	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա
ՊՊ	Պետական պարտատոմսեր
ՊԿՊ	Պետական կարճաժամկետ պարտատոմսեր
ԷՎՀ	Էլեկտրոնային վճարումների համակարգ
ՊԱՀՀ	Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

